

Արեմ Մկրտչյան, Գագիկ Թումանյան,  
Արթուր Աթանեսյան, Մարիա Զասլավսկայա

# ՆԱՅԿԱԿԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՑԱՆՑԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆՄԱՆ ՈՐՈՇ ՆԱՐՑԵՐ

[ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԱՄԱՆՍԱՐԱՆ ]

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Արեմ Մկրտչյան, Գագիկ Թումանյան,  
Արթուր Աթանեսյան, Մարիա Զապավսկայա

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ  
ՑԱՆՑԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ  
ԳՈՐԾԱՌՆՄԱՆ ՈՐՈՇ  
ՀԱՐՑԵՐ

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2015

ՀՏԴ 314.7  
ԳՄԴ 60.7  
Հ 253

Հրատարակության և երաշխավորվել  
ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի  
խորհրդի կողմից

Հ 253 Հայկական միգրացիոն ցանցերի ձևավորման և գործառնման որոշ  
հարցեր/ Արեն Մկրտչյան, Գագիկ Թումանյան, Արթուր Աթանեսյան,  
Մարիա Զապլավսկայա.- Եր.: ԵՊՀ հրատ., 2015, 56 էջ:

Գրքում ներկայացված են ՀՀ կրթության և գիտության նախարարության  
գիտության պետական կոմիտեի կողմից հատկացված գիտական դրա-  
մաշնորհի շրջանակներում 2013-2015 թթ. իրականացված ուսումնասիրու-  
թյան արդյունքները, որոնք վերաբերում են հետխորհրդային տարիների  
միգրացիոն գործընթացների հետևանքով հայաստանյան համայնքների  
ներսում ավանդական սոցիալական փոխկապվածությունների և ներքին հա-  
մայնքային սոցիալական ցանցերի փոխակերպման, վերագրային միգրա-  
ցիոն ցանցերի ձևավորման և գործառնման առանձնահատկություններին:  
Գիրքը նախատեսված է արդի միգրացիոն գործընթացներով հետաքրքրվող  
մասնագետների, դասախոսների և ուսանողների համար:

ՀՏԴ 314.7  
ԳՄԴ 60.7

ISBN 978-5-8084-1989-6

© ԵՊՀ հրատ., 2015  
© Հեղ. խումբ., 2015

## Հիմնախնդիրը

Ժամանակակից հասարակությունները բնութագրվում են մի շարք հատկություններով, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման ազդեցության արդյունքում առաջ եկող սոցիալական հաղորդակցման միջնորդավորվածությամբ և դրանով իսկ՝ մարդկանց միջև հարաբերությունների փոխակերպմամբ: Բացի դրանից՝ ժամանակակից հասարակությունների համար բնութագրական է դառնում ատոմիզացիան՝ մարդկանց միջև սոցիալական հեռավորության մեծացումն ու անհատական շահերի գերակայությունը կոլեկտիվ գործունեության և շահերի հանդեպ: Այս ամենի հետևանքով փոխակերպվում է ավանդական համայնքը՝ որպես հայ հասարակության և հայկական ինքնության պահպանման կարևորագույն օղակը:

Մյուս կողմից՝ արդի Հայաստանում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և քաղաքական գործընթացների արդյունքում շարունակվող աշխատանքային միգրացիան և արտագաղթը՝ մշտական բնակման, նույնպես փոխակերպում են համայնքային սոցիալական կապերն ու հարաբերությունները Հայաստանի ներսում՝ դրանք տեղավորելով Հայաստանից դուրս, ժամանակակից հաղորդակցման մեթոդների օգտագործման միջոցով ստեղծելով վերագգային (տրանսագգային) հաղորդակցման, կապերի և փոխհարաբերությունների նոր՝ վերագգային մակարդակ:

Վերոնշյալ սոցիալական գործընթացներն իրենց բնույթով ոչ միայն փոխակերպում են հայաստանյան հասարակության ներսում տեղի ունեցող սոցիալական կապերն ու հարաբերությունները՝ դրանք դարձնելով վերագգային, ընդգրկելով Հայաստանից դուրս գտնվող հին և նորաստեղծ հայկական համայնքներ, այլև վկայում են հայաստանյան հասարակության ներսում առկա այնպիսի հիմնախնդիրների հրատապության մասին, ինչպիսիք են սոցիալական կապերի և հարաբերությունների թուլացումն ու խեղվածությունը, հասարակության անդամների միջև վստահության մշակույթի ձևափոխումը, ավանդական համայնքի ներկայացուցիչների կողմից իրենց տնտեսական խնդիրների լուծման փորձը ոչ թե ավանդական, այլ միգրացիոն ցանցի՝ Հայաստանից դուրս փնտրվող կապերի և հարաբերությունների ստեղծման միջոցով:

Ձևավորվել է նաև հայկական ավանդական ընտանիքը: Եթե այն ավանդաբար բնութագրվել է որպես կոմպակտ կերպով բնակվող և անմիջական ու կայուն կապերով ու հարաբերություններով միավորված սոցիալական խումբ, որն ուներ ընդհանուր գույք և տնային տնտեսություն, ապա ժամանակակից մեծածավալ աշխատանքային միգրացիայի հետևանքով հայկական ընտանիքը նույնպես դառնում է վերազգային. ընտանիքի անդամների միջև շփումը կրում է միջնորդավորված բնույթ, նրանց փոխհարաբերությունները սեզմենտավորված են և պայմանավորված կոնկրետ տարածության հեռացվածությամբ և ժամանակի փոլայնությամբ՝ միգրացիայի սեզմայնությամբ համապատասխան:

Այսպիսով՝ հայկական միգրացիոն ցանցերը ոչ միայն վերոնշյալ սոցիալ-տնտեսական և քաղաքական փոխակերպումների հետևանք են, այլև ստեղծվում են որոշակի կոնկրետ գործառույթների իրականացման նպատակով: Մասնավորապես վերազգային հայկական սոցիալական ցանցերի ներսում մշտապես շրջանառության մեջ են սոցիալական և ֆինանսական կապիտալը, տեղեկատվությունն ու փոխազդեցությունը հայաստանյան համայնքների և արտերկրում ձևավորված համայնքների միջև: Հայկական վերազգային սոցիալական ցանցերը դառնում են հայ ժողովրդի գոյության կարևորագույն ձևը: Ուստի, **հայկական վերազգային սոցիալական ցանցերի** (Armenian Transnational Migration Networks) սոցիոլոգիական ուսումնասիրությունը կարևոր տեսական և կիրառական խնդիր է:

Բացի դրանից՝ վերազգային հայկական սոցիալական ցանցերի ձևավորման և գործառնման մեխանիզմների ուսումնասիրությունը թույլ կտա ստանալ Հայաստան-Մփյուռք փոխհարաբերությունների դինամիկ պատկերը, նորովի քննել հայկական սոցիալական ցանցերի ռազմավարական նշանակությունը Հայաստան-Մփյուռք միասնական գործառնության խթանման համար: Հետազոտությունը նաև թույլ կտա զարգացնել միգրացիոն ցանցերի գործառնման քաղաքագիտական, սոցիալ-հոգեբանական, տնտեսագիտական կողմերի հետազոտ ուսումնասիրություններն ու համապատասխան տեսակիրառական խնդիրների լուծումը:

## Տեսական մոտեցումներ

Ընթացիկ միգրացիոն հոսանքները հատկանշվում են համաշխարհային վերազգային էթնիկ տարածություններ ձևավորելու ունակությամբ: Նման տարածությունների ձևավորումը բնորոշ է հայերին<sup>1</sup>, որոնց կանոնավոր միգրացիոն տեղաշարժերը պատմականորեն ուղեկցվել են տարածաշրջանային անկայունություններով, ինչպիսիք են պատերազմական իրավիճակները ու տարատեսակ այլ կոնֆլիկտները: Պատմական Հայաստանից և դեպի պատմական Հայաստան ուղղություններով միգրացիոն գործընթացների համար խթան հանդիսացած խոշորամասշտաբ պատմական իրադարձությունների շարքում թերևս ամենակարևորը 19-րդ դարի վերջին տասնամյակը և 20-րդ դարի առաջին տասնամյակը ներառող Օսմանյան կայսրության կողմից իրագործված հայերի ցեղասպանությունն է, ինչպես նաև 20-րդ դարի վերջում ԽՍՀՄ-ի փլուզումը, որը հանգեցրեց տնտեսական, սոցիալական, քաղաքական համակարգերի կազմաքանդմանը՝ առաջ բերելով նոր միգրացիոն հոսանքներ: Հայկական վերջին միգրացիոն ալիքները դեռևս գործում են, որոնց հիման վրա կառուցակցված նոր միգրացիոն ցանցերն ու ճյուղերը ներկայումս գործառնման փուլում են:

Վերազգային ցանցերի ուսումնասիրության մոտեցումներից մեկը ապատարածականացման մոտեցումն է, որը կիրառվում է էթնիկ խմբերի<sup>2</sup> մոբիլության նկարագրության համար և դառնում է համախմբման նոր ձևերի (ներառյալ հին ձևերի փոփոխությունը), ինչպես նաև սոցիալական ցանցերի կառուցակցման հիմք: Սոցիոլոգիական հետազոտությունները, որոնք միգրացիան դիտարկում են որպես միգրացիոն տարածությունների կառուցակցման հիմնարար եղանակ, կիրառելի են նաև վերազգային միգրացիոն ցանցերի դեպքում<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Armenia around the World: Migration and Transnationality (ed. A. Mkrtichyan, 2015). Frankfurt am Main, Peter Lang Edition; Mkrtichyan, A. (2004). Ethnonationalität und ethnokulturelle Konflikte bei der Bildung von Diasporagemeinden. - In: Berliner Blätter: Ethnographische und ethnologische Beiträge, Heft 33, Münster: LIT, էջ 69-85:

<sup>2</sup> Appadurai, A. (1997). Modernity at Large: Cultural Dimensions in Globalization, Minnesota, University of Minnesota Press.

<sup>3</sup> Տե՛ս Kivisto P., Faist Th. (2010). Beyond a Border: The Causes and Consequences of

Սոցիալական համախմբվածության հայեցակարգն ամենահաճախ կիրառվող մոտեցումներից է, որն օգնում է հասկանալ վերագրված սոցիալական ցանցերի գործառնման ներքին մեխանիզմները: Սոցիալական համախմբվածությունը սահմանող և կոնցեպտուալիզացնող կարևոր մոտեցումները մշակվել են Ջ. Ջենսոնի և ավելի ուշ՝ Փ. Բեռնարդի կողմից, ովքեր առանձնացված երեք կատեգորիաների տակ համաբաշխում են վեց բաղկացուցիչ տարրեր.

1. Տնտեսական (ներառվածություն և հավասարություն),
2. Քաղաքական (լեզվախմբություն և մասնակցություն),
3. Սոցիո-մշակութային (հանդուրժողականություն և պատկանելության գիտակցում)<sup>4</sup>:

Այնուհետև, ինչպես նշում են Բաուվայսը և Ջենսոնը, սոցիալական կապիտալի և սոցիալական ցանցերի ամենակարևոր բաղկացուցիչներից մեկը համայնական և ընտանեկան միավորների միջև ծավալվող փոխգործողությունն է, ինչպիսիք են, օրինակ, քաղաքացիական ներգրավվածությունը, միութենական գործունեությունը և համատեղ նախաձեռնությունների հետ կապված խնդիրների լուծման դյուրիմությունը<sup>5</sup>:

Միգրացիոն ցանցերի վերագրված գործառնության ուսումնասիրման ժամանակակից մոտեցումներից մեկը Սփյուռքի ուսումնասիրություններում հայրենիք-սփյուռք կապի դիտարկումն է՝ որպես միգրացիոն ցանցի գործառնման արդյունավետության չափման մոտեցում: Այս համատեքստում կարևորվում են հայրենիքի և ձևավորված սփյուռքի (արտերկրում գործող տարրեր ազգային համայնքների) միջև տնտեսական, քաղաքական և մշակութային ազդեցությունները<sup>6</sup>:

---

Contemporary Immigration. Pine Forge Press:

<sup>4</sup> Տե՛ս Jenson J. (2010). Defining and Measuring Social Cohesion, Commonwealth Secretariat and UN Instituted for Social Development; Bernard, Paul (1999). Social Cohesion: A Critique CPRN Discussion Paper F09, Canadian Policy Research Networks:

<sup>5</sup> Beauvais C., J. Jenson (2002). Social Cohesion: Updating the State of the Research CPRN, Discussion Paper F22, Canadian Policy Research Networks.

<sup>6</sup> Տե՛ս, օրինակ, Kaloudis G. (2008). The Influence of the Greek Diaspora on Greece and the United States. International Journal on World Peace, Vol. XXV, No. 3, September, էջ 29-59:

Այս իմաստով առանձին հետազոտություններում հատուկ ուշադրության է արժանացել այն, թե արդյոք ուղարկող երկիրը միգրանտների հին և նոր սերունդների կողմից դեռևս ընկալվում է որպես բնօրրան, մասնավորապես, երբ համեմատության եզրեր ենք անցկացնում միգրանտների ծագման երկիր-հայրենիքի և այն երկրի միջև, որտեղ հին և նոր սերունդի միգրանտները փաստացիորեն ապրում են<sup>7</sup>:

Միգրացիոն ցանցերի և սփյուռքը ներկայացնող համայնքների ուսումնասիրությանը նվիրված ժամանակակից հետազոտությունները մեծ տեղ են հատկացնում ուղարկող երկրի տնտեսության և զարգացման վրա սփյուռքի ազդեցության դիտարկմանը<sup>8</sup>: Գոյություն ունեն մի շարք հարցեր, որոնք հնարավոր է արծարծել և խորացնել, մշակել և լուծել վերազգային ցանցերի միջոցով, դրանց ինստիտուցիոնալ և ոչ ֆորմալ կառուցվածքների ընդգրկմամբ, ինչը նախատեսում է նաև միգրացիոն ներհոսքերի հետևանքով ձևավորված համայնքների և սփյուռքի ինստիտուցիոնալ կառույցների՝ որպես միգրացիոն ցանցի հանգույցների մասնակցությունը: Մասնավորապես գոյություն ունեն ուղարկող երկրի վրա միգրացիոն ցանցերի ազդեցության որոշ առանձնահատկություններ, որոնք կարող են պայմանավորել ուղարկող երկրի տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքը և դրանց հետ կապված գործընթացները՝ դառնալով միգրանտների ծագման երկրի տնտեսական քաղաքականության և այլ ձեռնարկումների խթանիչներից մեկը<sup>9</sup>: Որոշ դեպքերում ուղարկող պետությունն

---

<sup>7</sup> Golob T. (2010). The Meaning of «Home» and «Homeland» in Slovene Diasporic Communities. Lithuanian Ethnology: Studies in Social Anthropology & Ethnology, Issue 10, pp. 117-137.

<sup>8</sup> St' u Trotz A. D., and Mullings B. (2013). Transnational Migration, the State, and Development: Reflecting on the “Diaspora Option”. Small Axe: A Caribbean Journal of Criticism, No. 41, July, էջ. 154-171; Munshi, K. (2003). Networks in the Modern Economy: Mexican Migrants in the U. S. Labor Market. The Quarterly Journal of Economics, May, էջ 549-599:

<sup>9</sup> St' u Katseli L. T., Lucas R. E. B. and Xenogiani Th. (2006). Effects of Migration on Sending Countries: What Do We Know? OECD Development Centre Working Paper No. 250, June, էջ. 1-90; Careja, R. (2013). Emigration for Development? An Exploration of the State's Role in the DevelopmentMigration Nexus: The Case of Romania. International Migration, Vol. 51 (5), էջ 76-90:



իր տնտեսական զարգացմանը նպաստելու նպատակով մշակում է հատուկ բարենպաստ քաղաքականություն և ռազմավարություն՝ արտերկրում գործող իր հայրենակիցների համայնքներին իր զարգացման մասնակիցը դարձնելու նպատակով<sup>10</sup>:

Միգրացիոն ցանցերը և նրանց գործառույթները, հանդիսանալով հիմնականում ընդունող երկրի միգրացիոն քաղաքականությանը վերաբերող քննարկումների խնդրո առարկա, գտնվում են պետական որոշ մարմինների, ինչպես նաև միգրացիոն խնդիրների շուրջ գործառնող միջազգային մասնագիտացված կազմակերպությունների ու շաղկապային կենտրոնում<sup>11</sup>:

Արդի ուսումնասիրությունների ուղղություններից մեկն է միգրացիոն գործընթացների հետևանքով արտերկրում ձևավորված ազգային համայնքների դերակատարման խնդիրը իրենց ծագման երկրի քաղաքական կյանքում<sup>12</sup>: Մասնավորապես ուսումնասիրությունների մի մասում քննարկվում է միգրանտների հիմնական բնակության երկրի և իրենց ծագման երկրի միջև քաղաքական հարաբերությունների զարգացմանը նպաստելու հանգամանքը, որտեղ ազգային համայնքները դիտվում են որպես միջնորդ իրենց բնակության և իրենց ծագման երկրների միջև: Որոշակի պայմաններում ազգային համայնքն արտերկրում ծագման պետության համար կարող է դառնալ միջոց՝ այլ պետություններում իր շահերն ամրապնդելու, իր արտաքին քաղաքական նպատակներն իրականացնելու համար<sup>13</sup>: Սփյուռքի հա-

---

<sup>10</sup> Տե՛ս, օրինակ, Brinkerhoff J. M. (2009). Creating an Enabling Environment for Diasporas' Participation in Homeland Development. *International Migration*, Vol. 50 (1), էջ 75-95:

<sup>11</sup> Տե՛ս Networks and their Influence on Migration Policy Conclusions from the Romanian-Spanish Migration Space. *Focus Migration*, Policy brief, 2008, N 11, October, էջ 1-8:

<sup>12</sup> Տե՛ս, օրինակ, Zhu Zh. (2007). Two Diasporas: Overseas Chinese and Non-resident Indians in Their Homelands' Political Economy. *Journal Of Chinese Political Science*, vol. 12, no. 3, Fall, էջ 281-296:

<sup>13</sup> Տե՛ս, օրինակ, Waxman D., Lasensky S. (2013). Jewish Foreign Policy: Israel, World Jewry and the Defence of "Jewish Interests". *Journal of Modern Jewish Studies* Vol 12, No. 2 July, pp. 232-252; Ziegler, Ch. E. (2006). The Russian Diaspora in Central Asia: Russian Compatriots and Moscow's Foreign Policy. *DEMOKRATIZATSIYA*, Vol. 14, No. 1, Winter, Heldref Publications, էջ 103-126:

մայրքների ուղղությամբ իրականացված հանգամանալից ուսումնասիրությունների թվում են նաև ընդունող երկրում սփյուռքի ներկայացուցիչների կողմից էթնիկ ցանցերի միջոցով իրագործվող քաղաքական լոբբինգի վերաբերյալ դիտարկումները<sup>14</sup>:

Հետազոտությունների այդ ուղղության մեջ էական դեր ունեն Հաստատան-Սփյուռք ուսումնասիրությունների համապատասխան գիտական մշակումները: Տվյալ հարցին առկա մոտեցումների շարքում կարելի է առանձնացնել հայկական սփյուռքի՝ որպես ՀՀ և հայ ազգային շահերն արտերկրում պաշտպանող ինստիտուցիոնալ համակարգի գործառնմանն ուղղված ուսումնասիրություններ, ինչպես նաև ՀՀ տնտեսական ու քաղաքական կյանքում հայկական սփյուռքի ունեցած դերին և հնարավորություններին նվիրված ուսումնասիրություններ<sup>15</sup>:

Էթնիկ միգրացիոն ցանցերը, որոնք դուրս են գալիս ազգային պետությունների սահմաններից և ձևավորում վերազգային միգրացիոն ցանցեր, կարող են քննարկվել որպես էական մարդկային, տնտեսական, քաղաքական, մշակութային ներուժ, որի ուսումնասիրությունն ու համապատասխան մեխանիզմների ու ռազմավարությունների ստեղծման դեպքում կառավարումը կարող են էապես նպաստել ազգային շահերի ամրապնդմանն ու պաշտպանությանը պետության սահմաններից դուրս<sup>16</sup>:

---

<sup>14</sup> Singh A. (2012). The Diaspora Networks of Ethnic Lobbying in Canada. Canadian Foreign Policy Journal, Vol. 18, No. 3, September, էջ. 340-357.

<sup>15</sup> Zarifian J. (2014). The Armenian-American Lobby and Its Impact on U.S. Foreign Policy. Society, Springer, N 51, pp. 503–512: Տե՛ս, օրինակ, Gyulumyan G. (2008). Enhancing the Role of the Diaspora in Promoting Armenia's Sustainable Development. Duke Center for International Development, Terry Sanford Institute of Public Policy, Duke University, available at [http://www.aiprg.net/UserFiles/File/annual08/papers/Gohar\\_Gyulumyan.pdf](http://www.aiprg.net/UserFiles/File/annual08/papers/Gohar_Gyulumyan.pdf), accessed 22.02.2015; Kotanjian, H. (2004). Armenian Security and U.S. Foreign Policy in the South Caucasus. The Quarterly Journal, VOL. III, NO 2, pp. 15-32; Armenia-Diaspora Relations: 20 Years since Independence (2010). Policy Forum Armenia, available at <http://www.pf-armenia.org/sites/default/files/documents/files/PFA%20Diaspora%20Report.pdf>, accessed 22.02.2015.

<sup>16</sup> Այդ ուսումնասիրություններն ունեն ոչ միայն տեսական, այլև կիրառական բնույթ և հենված են կոնկրետ վերազգային միգրացիոն ցանցերի գործառնման փորձի վրա, օրինակ՝ Trotz, A. D., Mullings, B. (2013). Transnational Migration, the

Միգրացիոն ցանցերին նվիրված ուսումնասիրությունների շարքում հատկանշվում են նաև աշխատանքային միգրանտների տեղային համայնքների ուսումնասիրությունները, որոնք ներառում են էթնիկ տարածության հետազոտություն: Մասնավորապես ուսումնասիրության առարկա են միգրանտների ներխմբային դինամիկան, սովորույթները, ֆորմալ և ոչ ֆորմալ էթնիկ ինստիտուտները և նրանց տեղային էթնիկ մոբիլիզացումների մեխանիզմները<sup>17</sup>: Այսպես՝ նման հետազոտություններ անցկացվել են հետխորհրդային Ռուսաստանի մերձակա երկրներից Ռուսաստան մեկնած աշխատանքային միգրանտների հարաբերականորեն նոր էթնիկ համայնքներում, որտեղ միգրանտները ձևավորել և զարգացրել են իրենց էթնիկ «Չայնա-թաուն»-ները (օրինակ՝ «Կիրգիզ-թաուն»-ը Մոսկվայում)<sup>18</sup> իրենց օժանդակ ֆորմալ և ոչ ֆորմալ կառուցվածքներով, նոր սոցիալ-մշակութային միջավայրում հարմարվելու և խնդիրների լուծման մեխանիզմներով, ինչպես նաև էթնիկ համայնքները և ուղարկող երկրի համայնքները ընդգրկող ընդարձակ ցանցային կապերով:

---

State, and Development: Reflecting on the “Diaspora Option”. *Small Axe: A Caribbean Journal of Criticism*, N 41, July, էջ 154-171:

<sup>17</sup> St’u Wong B. (1998). *Ethnicity and Entrepreneurship: The New Chinese Immigrants in the San Francisco Bay Area*. Allyn and Bacon, 120 p.; Guest, K. J. (2011). *From Mott Street to East Broadway: Fuzhounese Immigrants and the Revitalization of New York’s Chinatown*. *Journal of Chinese Overseas* 7, pp. 24-44; Gabaccia, D. R. (2006). *Global Geography of ‘Little Italy’: Italian Neighborhoods in Comparative Perspective*. *Modern Italy*, Vol. 11, No. 1, February, էջ 9-24:

<sup>18</sup> Varshaver E., Rocheva A., Kochkin E., Kuldina E. (2012). *Kyrgyz Migrants in Moscow: Results of a Quantitative Research on Integration Tracks*. Moscow, p. 153 ([http://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract\\_id=2425312](http://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2425312)).

## **Հետազոտության նպատակը, խնդիրները, մեթոդաբանությունը**

Սույն հետազոտության<sup>19</sup> նպատակն էր բացահայտել միգրացիոն գործընթացների հետևանքով հայաստանյան համայնքների ներսում անդամների միջև ավանդական սոցիալական փոխկապվածությունների խաթարման, ներքին համայնքային սոցիալական ցանցերի փոխակերպման, վերազգային միգրացիոն ցանցերի ձևավորման և գործառնման առանձնահատկությունները:

### **Հետազոտության խնդիրներն էին.**

1. Ուսումնասիրել հայաստանյան համայնքներն իրենց կառուցվածքային առանձնահատկություններով, սիմվոլիկ ձևերով, սովորույթներով, պարզել միգրացիոն գործընթացների ազդեցությունը համայնքի փոխակերպումների վրա:

2. Վերհանել հայաստանյան համայնքների ներսում մարդկանց միջև կապերի և հարաբերությունների խաթարման ռիսկերը՝ միգրացիոն գործընթացների հետ կապված (որպես պատճառ և հետևանք), պարզել միգրացիայի ընթացքում ձևավորվող նոր սոցիալական ցանցերում ներհամայնքային հարաբերությունների վերարտադրման և/կամ փոխակերպման ձևերը:

3. Պարզել ժամանակակից հաղորդակցական տեխնոլոգիաների ազդեցությունը միգրացիոն ցանցերի զարգացման և գործառնման վրա, ուսումնասիրել հայկական միգրացիոն ցանցերում ընդգրկվողների կողմից հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները:

4. Պարզել հայկական միգրացիոն ցանցերի գործառնման նպատակները, մասնավորապես կապված դրամաշրջանառության և տեղեկատվության փոխանակման, ազգային ինքնության պահպանման, տեղական համայնքում տեղի ունեցող գործընթացներին մասնակցելու կամ այդ գործընթացների վերահսկման հետ և այլն:

---

<sup>19</sup> Սույն ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կողմից հատկացված 13-5D408 գիտական դրամաշնորհի շրջանակներում (2013-2015 թթ.):

5. Քննարկել հայաստանյան ներհամայնքային ինքնության փոխակերպումներն ու դրսևորումները միգրացիոն ցանցերում:

6. Պարզել վերազգային հայկական սոցիալական ցանցերի ազդեցության հնարավորություններն ու մեթոդները Հայաստանում տեղի ունեցող գործընթացների վրա, մասնավորապես միգրացիոն ցանցերի միջոցով հայկական Սփյուռքի ներկայացուցիչների և Հայաստանից վերջին տարիներին արտագաղթածների կողմից մասնակցությունը Հայաստանում տեղի ունեցող սոցիալական կյանքին և համայնքի կամ պետության մակարդակով կարևորվող սոցիալ-քաղաքական իրադարձություններին:

7. Ցուցադրել հայկական միգրացիոն ցանցերի գործառնման առանձնահատկություններն ու այդ ցանցերի օգտագործման հնարավորությունների վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ Հայաստանի շուրջ տեղի ունեցող գործընթացների վրա ներազդելու տեսանկյունից:

Հետազոտության ընթացքում հիմնականում շեշտադրվել են երկու լրկալ համայնքների բնակիչների միջև հաղորդակցման առանձնահատկություններն ու հարաբերությունները (ՀՀ մարզային համայնքների բնակիչներ և միգրանտներ մույն այդ համայնքներից, որոնք ներկայումս բնակվում են արտասահմանյան երկրներում): Հետազոտության հիմնական խնդիրն էր բացահայտել հայկական վերազգային միգրացիոն ցանցի երկու օղակների փոխկապվածության բնույթը և դուրս բերել այն իրական-գործառնական և սիմվոլիկ-պայմանական նպատակները, որոնք միավորում են միգրացիոն ցանցի ներքին ու արտաքին օղակների ներկայացուցիչներին և նպաստում ցանցի գործառնմանը: Ակնկալվել է բացահայտել աշխատանքային միգրանտների կողմից իրենց հայաստանյան համայնքներից դուրս ձևավորված ենթացանցերի գործառնման տնտեսական, քաղաքական և սոցիալական նպատակներն ու թիրախային ուղղությունները, իրենց կապը ՀՀ ներհամայնքային խնդիրների լուծման հետ, ազդեցությունը Հայաստանի համայնքների բնակիչների վրա: Կարևորվել է Հայաստանի համայնքներում առկա ընկալումների և գնահատումների բացահայտումը՝ այդ համայնքների բնակիչների կարծիքն իրենց հարազատների, բարեկամների, համազյուղացիների մասին, որոնք

ապրում և աշխատում են արտերկրում ու կարող են դիտվել որպես ոչ միայն ավանդական տնտեսական, այլև քաղաքական, սոցիալ-հոգեբանական աջակցության աղբյուր իրենց ներքին խնդիրների լուծման համար: Առանձին ուշադրություն է դարձվել ՀՀ համայնքների և արտերկրում հայկական միգրացիոն ցանցերի ինստիտուցիոնալ ու անհատական ներկայացուցիչների միջև կապի և հաղորդակցման միջոցների, այդ կապի հաճախականության, կապն իրականացնելու նպատակների և դրդապատճառների բացահայտմանը, որի օգնությամբ հնարավոր է նկարագրել վերագգային միգրացիոն ցանցերի գործառնման ներքին մեխանիզմները, եղանակները:

**Հետազոտության ընթացքում կիրառվել է հայաստանյան վերագգային միգրացիոն ցանցերի տեղային ենթացանցերի համալիր սոցիոլոգիական հետազոտության մեթոդական հարացույցը:** Համալիր սոցիոլոգիական հետազոտության ընթացքում կիրառվել են տեղեկատվության հավաքման հետևյալ հիմնական մեթոդները՝ կիսաձևայնացված հարցազրույցների, խորին հարցազրույցների և առանցքային տեղեկատուների հետ հարցումների մեթոդները: Ելնելով այն հանգամանքից, որ հետազոտության թիրախում գտնվում էին վերագգային սեզոնային աշխատանքային միգրացիոն գործընթացները, և հաշվի առնելով, որ սույն գործընթացները ունեն յուրահատկություններ և առանձնահատուկ ավանդույթներ դեռևս Խորհրդային Միության ժամանակաշրջանից սկսած, որպես հետազոտության գլխավոր համախմբություն սահմանվել են ՀՀ և ԼՂՀ այն համայնքները, որոնք առավել ներգրավված են վերագգային գործընթացներում: Ընտրանքի ծավալը կազմել է 782 տնային տնտեսություն, որն ապահովում է միջինում 4.2% ընտրանքի սահմանային սխալը: Իրականացվել է քառաստիճան կլաստերային շերտավորված ընտրանք: Առաջին աստիճանում ընտրվել են ՀՀ և ԼՂՀ այն մարզերը և շրջանները, որոնք առավել ներգրավված են սեզոնային աշխատանքային միգրացիայում: Ընտրվել են ՀՀ 7 մարզեր, այն է՝ Երևան, Շիրակ, Լոռի, Գեղարքունիք, Արարատ, Վայոց Ձոր և Սյունիք, ու ԼՂՀ 4 շրջան՝ Մարտակերտ, Ասկերան, Ստեփանակերտ և Շուշի:

Երկրորդ աստիճանում իրականացվել է բնակավայրերի տիպային ընտրանք, որտեղ որպես չափանիշ սահմանվել է բնակավայր-

րի բնակչության վերազգային սեզոնային միգրացիայում ընդգրկվելու աստիճանը: Ընտրանքի ծավալը այդ աստիճանում կազմել է ՀՀ 29 բնակավայր և ԼՂՀ 8 բնակավայր:

Երրորդ աստիճանում իրականացվել է տնային տնտեսությունների երթուղային հարցման եղանակի օգնությամբ պատահական ընտրություն: Տնային տնտեսությունների բաշխումը ըստ բնակավայրերի իրականացվել է ուղիղ համեմատական շրջանի (մարզի) բնակչության և բնակավայրի մեծությամբ:

Ընտրանքի չորրորդ աստիճանում հարցվողի ընտրությունը իրականացվել է համապատասխան «ունիկալ հարցվողի» ռազմավարությամբ, այսինքն՝ ընտրվել է տնային տնտեսության առավել տեղեկացված ներկայացուցիչ:

Հետազոտության ընթացքում իրականացվել է նաև շուրջ 72 խորին հարցազրույց Վայոց Ձորի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի և Սյունիքի վարչական շրջանների, ինչպես նաև ԼՂՀ համայնքների բնակիչների, այդ թվում՝ 12 տեղային համայնքների գյուղապետերի՝ որպես առանցքային տեղեկատուների հետ: Միգրանտների ընտանիքների անդամների հետ անցկացված խորին հարցազրույցների նպատակը հայաստանյան և արտասահմանյան համայնքների միջև ձևավորված և գործառնող կապերի համակարգի պարզորոշումն է, ինչպես նաև վերազգային միգրացիոն ցանցերի գործառնման առանձին կողմերի բացահայտումը:

Ուսումնասիրության առարկա են հանդիսացել նաև տեղային համայնքների և միգրացիոն գործընթացների արդյունքում այլ պետություններում համայնքների միջև ձևավորված միգրացիոն ցանցերի գործառնման հնարավորությունները վիրտուալ դաշտում (համացանց՝ էլ. փոստ, սոցիալական ցանցեր, Skype): Այս հարցերի վերլուծության նպատակն էր պարզել վերազգային միգրացիոն ցանցի ներսում ընդհանուր վիրտուալ միջավայրի ձևավորման հեռանկարները, որտեղ միգրանտները, չնայած իրական ֆիզիկական հեռավորությանը, պահպանում են կապը իրենց տեղային համայնքների, ընտանիքների և հարազատների հետ: Վիրտուալ մակարդակում միգրացիոն ցանցերի ամրապնդումն ու ցանցերի ներսում հաղորդակցման դյուրին դառնալը կարող են փոքրացնել հայաստանյան հա-

մայրքների և արտերկրում գտնվող միգրանտների միջև կապի խզման ռիսկերը, նվազեցնել այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են ներհամայնքային ազգակցական և բարեկամական սոցիալ-հոգեբանական կապերը և մտերմությունը, կարոտը և այլն՝ դրանով իսկ նպաստելով աշխատանքային միգրացիայի և արտագաղթի ծավալների աննախադեպ աճին:



## Արդյունքների նկարագրություն

### Միգրացիոն գործընթացների ազդեցությունը ներհամայնքային խնդիրների վրա

Համաձայն վերջին ժամանակներում անցկացված հարցումների՝ Հայաստանի բնակչության 60%-ը հետաքրքրված է կանոնավոր միգրացիայով, մինչդեռ մոտ 31%-ը պատրաստ է մեկնել երկրից միայն մեծ պարբերականությամբ:<sup>20</sup> Պետք է հաշվի առնել նաև այն, որ ժամանակավոր էմիգրացիան սովորաբար կապված է լինում աշխատաշուկայի և տնտեսական գործոնների հետ, մինչդեռ անվերադարձ էմիգրացիան գլխավորապես սոցիալ-հոգեբանական կամ էքզիստենցիալ բնույթի պատճառներ ունի, ինչպիսիք են մարդու իրավունքների խախտումները, բռնությունը և չպաշտպանված լինելը:

Ընդ որում՝ Հայաստանի բնակչությունը հակված է արտագաղթել այնպիսի երկրներ, որտեղ նրանք աշխատանք և գործնական հեռանկարներ են տեսնում, որտեղ նրանք նախապես անհրաժեշտ հիմքեր են տեսնում ավելի ցածր ռիսկերի գնով հաստատվելու համար: Վերազգային միգրացիոն ցանցը սահմանում է միգրացիոն հոսանքների ուղղությունը, հետևաբար սպասվում է, որ հայաստանյան հասարակությունում մեծամասնությունը շահագրգռված է, որ լավ հարաբերություններ ստեղծվեն Հայաստանի և այն երկրների միջև, որոնք պոտենցիալ և գործող միգրանտների կողմից ընդունվում են որպես քիրախային ուղղություն:

Վիճակագրական տվյալների համաձայն՝ Հայաստանից մեկնողների համար քիրախային երկրների թվում Ռուսաստանը գլխավոր նպատակակետն է<sup>21</sup>: Ինչպես նշված է հաշվետվության մեջ,

---

<sup>20</sup> Public Perceptions on Political, Social, and Economic issues in South Caucasus Countries, April 18, 2014, Yerevan, Armenia, էջ 39, հասանելի է՝ [http://www.crrc.am/hosting/file/\\_static\\_content/barometer/2013/CB2013\\_public%20presentation\\_English.pdf](http://www.crrc.am/hosting/file/_static_content/barometer/2013/CB2013_public%20presentation_English.pdf)

<sup>21</sup> Results of the 2011/2012 Migration Survey on the Relationship between Skills, Migration and Development, European Training Foundation and Caucasus Research Resource Centers (Armenia), European Training Foundation, 2013, էջ 5, հասանելի է՝ [http://www.crrc.am/hosting/file/\\_static\\_content/projects/](http://www.crrc.am/hosting/file/_static_content/projects/)

«Ռուսաստանը նպատակակետ է հանդիսացել վերադարձած միգրանտների 80.8%-ի դեպքում և ներկայիս (ընթացիկ միգրանտների) 76.6%-ի դեպքում. համապատասխանաբար 5%-ի և 3.4%-ի դեպքում քիրախային են հանդիսացել ԱՊՀ երկրները, 5%-ի և 9.8%-ի դեպքում՝ եվրոպական երկրները, 5%-ի և 3.4%-ի դեպքում՝ ԱՄՆ-ն<sup>22</sup>։

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ բնակչության զգալի մասը անորոշ պատկերացումներ ունի իր համայնքի ապագայի վերաբերյալ, ինչը պայմանավորված է առկա սոցիալ-տնտեսական խնդիրներով և դժվարություններով։ Հարցվածները հիմնականում համանման պատասխաններ են տվել իրենց համայնքի հեռանկարների վերաբերյալ.

*«Ես չեմ կարող այս հարցին պատասխանել, մի բան, որ չկա, ես ոնց կարամ ասեմ՝ կփոխվի, թե չի փոխվի։ Հնարավոր էլ չի, որ փոխվի։ Եթե մի մարդ աշխատանք չունի, նա չի կարա հերազայի մասին մտածի։ Համայնքի վիճակն էլ պիտի գնալով վատանա։ Բանի էրեխեքը մեծացան, էնքան կարիքները շարանալու է»։*

*«Էս վիճակով ես մեր երեխաների համար ապագա չեմ պատկերացնում։ Եթե մի երեխան աշխատանք չունի, մի գործ չունի, ի՞նչ ապագա։ Նա ի՞նչ կարա իրա էրեխին սովորացնի»։*


Այնուամենայնիվ, զանգվածային հարցման արդյունքների համաձայն՝ հարցվածների որոշակի հատված կան լիովին, կան մասամբ բավարարված է սեփական կյանքից (Գծապատկեր 1)։

---

Migration\_and\_skills\_2011/Migration\_and\_skills\_Armenia.pdf.

22 Ibid, էջ 8:

**Պ-ծառայատվեր 1. Հարցվողների բավարարվածությունը սեփական կյանքից**



Ինչ վերաբերում է հարցվածների լավատեսությանը՝ առկա հիմնախնդիրների լուծման հնարավորությունների հետ կապված, ապա կարծիքների մեծամասնությունն ավելի հոռետեսական է (Աղյուսակ 1):

**Աղյուսակ 1. Հարցվողների բաշխումն ըստ խնդիրների լուծման հնարավորության առաջիկա 5 տարում**


	Տոկոս
1. Անպայման կլուծվեն	5.2
2. Հավանաբար կլուծվեն	39.7
3. Հավանաբար չեն լուծվի	29.3
4. Չեն լուծվի	25.8
Ընդամենը	100.0

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հարցվածների շրջանում ապագայի նկատմամբ ընկալումները ևս կապվում են միգրացիայի հետ: Համայնքի ապագայի տեսլականը հարցվածների պատկերացումներում, ի թիվս այլ գործոնների, ամբողջանում է նաև սպասելիքներով, որոնք, ըստ վերջիններիս, կապված են արտաքին միգրացիոն ցանցում ընդգրկվածների ցուցաբերած աջակցության հետ, մասնավորապես կարևորվում է ֆինանսական օժանդակությունը: Պատասխանելով հետևյալ հարցին՝ *«Եթե հնարավորություն ունենաք, կմեկնե՞ք Ձեր համայնքից: Հիմնավորե՞ք Ձեր պատասխանը»*, հարցվածներից շատերը նշեցին, որ իրենց ապագան տեսնում են Հայաստանում, սակայն հավելեցին նաև, որ խնդիրը իրավիճակային բնույթ ունի և կախված է իրենց արտաքին ռեսուրսներից և ցանցերից: Հարցվածների պատասխաններից կարելի է եզրակացնել, որ եթե նրանք արտերկրում աշխատող և գումար ուղարկող որևէ ազգակից չունենան, ապա տեղի համայնքը ապագա չի ունենա: Մյուս կողմից՝ տեղացիներից շատերը ցանկություն էին հայտնում մնալ և աշխատել իրենց համայնքում, բայց վճռորոշ գործոնը, որը ազդում է նրանց գնալու կամ մնալու որոշման վրա, համապատասխան աշխատանքն է: Այստեղ հատկանշական է մեջբերել հարցվածներից մեկի պատասխանը.

*«Ո՛չ, ես սիրում եմ իմ աշխարհի աշխատանքը, ես նախընտրում եմ ապրել գյուղում իմ հողի վրա, իմ տան կողքին, ես ուրիշ տեղ չունեմ գնալու»:*

Ինչ վերաբերում է միգրանտների վերադառնալու կամ չվերադառնալու կանխատեսումներին, ապա հարցվողների մոտ կեսը ակնկալում է միգրանտների վերադարձը հայրենիք (տե՛ս Գծապատկեր 2-ը): Սակայն 11.1%-ը համոզված է, որ ոչ մի դեպքում նրանք չեն վերադառնա:

**Գծապատկեր 2. Միգրանտների՝ Հայաստան մշտապես վերադառնալու մտադրության ակնկալիքները**



Չվերադառնալու պատճառներից հիմնականում նշում են այն, որ, ըստ նրանց, Հայաստանում հնարավոր չէ ապրել բարեկեցիկ կյանքով (այդպես կարծում է ամբողջ հարցվածների 16.7%-ը)<sup>23</sup>, ավելին՝ գրեթե բոլոր նշված պատճառները կապված են Հայաստանում ոչ պատշաճ պայմանների հետ (տե՛ս Աղյուսակ 2):

**Աղյուսակ 2. Միգրանտների՝ Հայաստան մշտական բնակության չվերադառնալու պատճառները**

	Տոկոս
1. Հայաստանում հնարավոր չէ ապրել բարեկեցիկ կյանքով	78.2
2. Հայաստանում կյանքն ապահով չէ, վտանգավոր է	3.4
3. Մարդուն Հայաստանում բանի տեղ չեն դնում	4.6
4. Ամուսնացած է	.6
5. Այլ երկրի քաղաքացիություն ունի	3.5
6. Այլ	3.6
7. Արտասահմանում ունի աշխատանք	1.5
99 ԴՊ	4.6
Ընդամենը	100.0

**Համայնքի բնակիչների ինքնընկալումն ու ներհամայնքային փոփոխությունները միգրացիայի հետևանքով**

Անդրադառնալով ներհամայնքային փոփոխություններին՝ նախ պետք է դուրս բերել այն ինքնութենական պատկերը, որը բխում է տվյալ համայնքի բնակչության ինքնաընկալման, ինքնանույնականացման առանձնահատկություններից: Նման փոփոխությունների մատնանշումը թույլ է տալիս ենթադրել, որ համայնքների բնակիչների ընկալումներում առկա են ինքնության վերաբերյալ որոշակի կողմնորոշումներ, առանց որոնց փոփոխությունները որպես այդպիսիք չեն կարող գիտակցվել:

<sup>23</sup> Աղյուսակում տոկոսները հաշվարկված են միայն այն հարցվողների համար, ովքեր գտնում են, որ միգրանտները չեն վերադառնա Հայաստան:

Գիտարկելով համայնքային ինքնությունը խմբային ինքնության համատեքստում՝ կարևոր էր պարզել, թե ինչ հատկանիշներ և յուրահատկություններ է վերագրում անհատը այն խմբին, որը նա ներկայացնում է: Արդյունքում, երբ սոցիալական խումբը (այս դեպքում խոսքը տվյալ համայնքի մասին է) սկսում է սահմանազատվել մյուսներից, խմբի յուրաքանչյուր անդամ սկսում է իր խմբի մյուս անդամներին՝ «յուրայիններին», տարբերել «օտարներից»: Այս գործընթացում, երբ առաջ է գալիս «մենք-նրանք» հարաբերության հատուկ գիտակցում, հստակ երևում է, որ խմբերը ոչ միայն տարածականորեն, այլև հոգեբանորեն տարբերակված են:

Ըստ այդմ՝ կարևոր էր նաև անդրադառնալ հարցվածների ընկալումներին՝ արտահայտված «մենք-նրանք» հարաբերությամբ: Մասնավորապես «Ո՞ւմ եք առաջին հերթին պատկերացնում՝ ասելով մենք/նրանք: Մենք/նրանք-ը Ջեզ համար ովքե՞ր են, ինչո՞ւ» հարցերի առնչությամբ հնչած պատասխաններից կարելի է դատել, որ համայնքի բնակիչների մեծամասնությունը «մենք»-ի տակ հասկանում է իր ընտանեկան ցանցը և մոտ ազգականներին, իսկ «նրանք»-ի տակ՝ համայնքի այն բոլոր անդամներին, որոնք ընդգրկված չեն այս շրջանակներում, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ տվյալ համայնքի բնակիչներից շատերի ընկալումներում խմբային ինքնության գիտակցումը գլխավորապես արտահայտված է ընտանեկան և ազգակցական կապերի մակարդակում: Ստորև ներկայացնենք նման պատասխաններից մեկը.

«Ես մենք ասելով հասկանում եմ իմ զավակներին, իմ թոռներին, իմ ընտանիքը: Ես ուրիշ պատկերացում չունեմ: Իսկ նրանք՝ դա արդեն ընտանիքից դուրս, հարևան ա կամ ազգական ա, էդ ձևի եմ պատկերացնում»:

Համայնքային ինքնության ուսումնասիրմանն ուղղված մյուս հարցադրումների արդյունքում ստացված տվյալներից պարզ դարձավ նաև, որ հարցվածների մեծամասնության ինքնընկալումը հիմնվում է ազգային պատկանելության գիտակցման վրա և կապվում է հայի հավաքական կերպարի հետ: Մասնավորապես «Ո՞վ եք դուք» հարցին հարցվածներից շատերը տվել են նման պատասխաններ.



*«Հայ եմ, ցանկությունս է Հայաստանում ապրել»:*

*«Առաջին հերթին ես հայ եմ: Ինչ համար փարբերություն չկա՝ գյումրեցի, վանաչորցի, թե երևանցի, հայր մնում է հայ»:*

Այսպիսի պատասխանների գերակշռությունը խոսում է այն մասին, որ դեկլարատիվ մակարդակում հարցվածները կողմնորոշվում են ըստ ազգային ինքնանույնականացման հիմքի՝ չնույնականացնելով իրենց ավելի տեղայնացված հանրության հետ: Սակայն այս ամենից ամեննին էլ չի կարելի եզրակացնել, որ հայաստանյան համայնքների ներկայացուցիչները ընդհանրապես չեն տեսնում տարբերություն իրենց և այլ համայնքների ներկայացուցիչների միջև: Հետագա ավելի մասնավորեցված հարցադրումների պատասխաններից դատելով՝ կարելի է եզրակացնել, որ այնուամենայնիվ յուրաքանչյուր համայնքի ներկայացուցիչ որոշակիորեն տարբերակում է իր համայնքը մյուսներից:

Նման տարբերակումներն իրենց արտացոլանքն են գտել հարցվողների գերակշռող մասի տված պատասխաններում: Մասնավորապես պատասխանելով այն հարցին, թե *«Ի՞նչ է նշանակում լինել Կոլյալ գյուղի/քաղաքի գավակ»*, հարցվողները հիմնականում խոսում էին իրենց գյուղի/քաղաքի ավանդույթների և սովորույթների, բարբառի մասին, ի թիվս դրանց նշում էին նաև այն կարծրատիպերը, որոնք այլ համայնքների ներկայացուցիչները ունեն իրենց վերաբերյալ: Այս համատեքստում կարևոր է նշել, որ հարցվողները առանձնացնում էին իրենց համայնքի բնակիչներին այլ համայնքի բնակիչներից ըստ հստակ հատկանիշների: Մասնավորապես այն հարցին, թե կա՞ որևէ յուրահատկություն, որը տարբերում է նրանց Հայաստանի այլ մարզերի, բնակավայրերի բնակիչներից, հնչել են մման պատասխաններ. *«Տարբերությունը մեծ է կուլտուրայի և կրթվածության առումով: Մասնակ իմ համոզմունքը չէ, շատերի կարծիքն է, մույնիսկ դրսից եկողները նշում են, որ այստեղ շատ են առավելությունները»:*

Խոսելով համայնքային կյանքի և համայնքի ներսում ընկալունային փոխակերպումների մասին՝ պետք է նշել, որ ըստ համայնքի բնակիչների՝ վերջին փոփոխությունները իրենց արտացոլանքն են գտել գլխավորապես սոցիալ-տնտեսական, սոցիալ-կառուցվածքային, բարոյական և հոգեբանական մակարդակներում: Նշենք, որ

այժմ հարցվողներին առավել հուզում են տնտեսական և միջավայրի բարեկարգվածության խնդիրները, իսկ քաղաքական և մշակութային հիմնախնդիրները պակաս ուշադրության են արժանանում: Առավել շատ հիշատակվող խնդիրների ցանկում են **աշխատատեղերի բացակայության խնդիրը** (այդ խնդիրը նշել է հարցվողների 44.4%-ը), **ճանապարհների անբարեկարգ վիճակը** (30.4%), **խմելու ջրի խնդիրը** (15.6%), ինչպես նաև **գազաֆիկացման** խնդիրը (11.7%-ը), հարցվողների 10%-ից պակաս քանակությունը նշել է այլ հիմնախնդիրներ:

Ինչպես նշում էին առանցքային տեղեկատուները, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո համայնքային կյանքում տարբերությունը հարուստների և աղքատների միջև է՛լ ավելի է ընդգծվել, ինչը պայմանավորված էր հետխորհրդային հասարակություններում ձևավորված նոր սոցիալ-տնտեսական հարաբերություններով: Ինչպես նշեց հարցվողներից մեկը.

*«Գյուղական բնակչությանը կարելի է բաժանել երկու խմբի՝ հարուստներ և աղքատներ: Հարուստները ավելի են հարստանում և առանձնանում մյուսներից՝ ունենալով իրենց կարգավիճակին հարիր սիմվոլիկ բնութագրիչներ, ինչպիսիք են իրենց տների բարձր դարպասները, որոնք բաժանում են այդ տները համայնքի մյուս տներից և թույլ են տալիս նրանց չչփվել հարևանների հետ»:*

Հարցվածների մեծ մասը, հետխորհրդային փոխակերպումները կապելով ընդունված արժեհամակարգի և մասնավորապես բարոյականության քայքայման ու կենսական չափորոշիչների հետընթացի հետ, կարծիք է հայտնել, որ տեղային համայնքներում հետխորհրդային փոխակերպումները գլխավորապես բացասական հետևանքներ են ունեցել: Պատասխանելով հարցին, թե ինչպիսի տարբերություններ կան ներկայիս գյուղացու և այն գյուղացու միջև, որը ապրել է այստեղ նախկինում, հարցվածներից շատերը միանման պատասխաններ են տվել: Մասնավորապես ինչպես հարցվածներից մեկը նշեց.

*«Շատ փարբերություններ կան, ներկայումս շատ խնդիրներ են առաջացել, որոնք չենք ունեցել նախկինում: Նախկինում կյանքը ավելի բարվոք էր, քայց հիմա ամեն քան դժվարացել է, աշխատանք չկա: Այս փոփոխությունները ամենուրեք իրենց ազդեցությունն են թողել, գործազրկությունը բացասական անդրադարձ է ունեցել փեղացիների բնավորության վրա»:*

Խոսելով արտագաղթի հիմքում ընկած պատճառների մասին՝ հարցվածները առաջին հերթին նշել են տնտեսական շարժառիթները, որոնց թվում են գյուղատնտեսական արտադրանքի իրացման անբարենպաստ պայմանները, տեղական շուկայի փոքր լինելը, ՀՀ Կառավարության կողմից տրամադրվող սահմանափակ հնարավորությունները: Ինչպես հարցվածներից մեկը նշեց.

*«Աշխատելը դժվար է այսրեղ, արդյունքները անշոշափելի են, ներկայումս չորս ընտանիքներ պատրաստվում են լքել գյուղը: Ռուսաստանում աշխատանքային պայմանները շատ ավելի բարենպաստ են, քանզի նույն աշխատանքը այնրեղ ավելի մեծ շահույթ է ապահովում: Այսրեղ, կարելի է ասել, չկա առևտրաշրջանառություն: Մենք նույնիսկ փակել ենք մեր պանրի գործարանը սպառման անարդյունավետության պատճառով: Կաթի գինը նվազել է, կաթը ներկայումս ավելի էժան է, քան ջուրը, անասնապահությամբ զբաղվող գյուղացիները, որոնք իրենց անասուններին կերակրել են շուրջ երկու փարի, հիմա սրիպված են մորթել իրենց կաթնատու անասուններին, որպեսզի վաճառեն նրանց միսը»:*

*«Համայնքի բնակիչներից շատերը հիմա մեկնում են համայնքից: Դա պայմանավորված է աշխատարեղերի պակասով: Մի շնչի համար գոնե քառասուն-հիսուն հազար դրամ պիտի ունենալ, որ հնարավոր լինի գոյարևել: Դրա համար էլ մարդիկ ձգտում են դեպի դուրս: Եթե ընտանիքից մեկը գոնե հարյուր հիսուն հազար եկամուտ ունենա, չի լքի գյուղը»:*

Հարցվածներից շատերը նշում էին, որ միգրացիոն գործընթացների պատճառով զգացվում է բնակչության որակական անկում, ինչը համայնքի ներսում զուգորդվում է սոցիալական և կառուցվածքային փոփոխություններով: Ինչպես հենց հարցվողներն են արտահայտվում, փոխվում է համայնքի «կառուցվածքային որակը»: Մասնավորապես համայնքի առավել նախաձեռնող բնակիչները դիմում են միգրացիայի, իսկ մնացած բնակիչները լավագույնս չեն ներկայացնում համայնքը, քանի որ նրանք նախկինում երբեք չեն ունեցել կարևոր դեր ու գործառույթներ համայնքում: Արդյունքում համայնքի կերպարը փոխվում և անգամ կորչում է: Ինչպես այս առնչությամբ նշել է հարցվածներից մեկը.

*«Բոլորը զննացին: Գյումրին արդեն այն չէ, ինչ առաջ էր: Բոլոր լավ մարդիկ զննացին, իսկ նրանք, ովքեր մնացել են, ուղղակի չունեն ֆինանսական միջոցներ արտասահման տեղափոխվելու համար»:*

Հատկանշական է նաև, որ որոշ շրջաններում (օրինակ՝ Գեղարքունիքում) միգրացիան ընկալվում է որպես առավելապես բացասական գործոն, քանի որ այն բացասաբար է ազդում մարդկային ռեսուրսների վրա: Այս տեսակետը լայնորեն կիսում են համայնքների տարեց ներկայացուցիչները, ովքեր պնդում են, որ միգրացիան փոխում է մարդկանց՝ նրանց դարձնելով ավելի հիասթափված, ծուլ և թուլացնում է մարդկանց ցանկությունը աշխատելու իրենց հողում իրենց երկրի համար:

Շատ հարցվողներ հաստատել են, որ արտագաղթի հետևանքով իրենց տեղական համայնքները կորցրել են որակյալ աշխատողներ և մասնագիտացված աշխատանքային ռեսուրսներ, և այս փոփոխությունները ուղղակիորեն ազդում են լոկալ ներուժի վրա.

*«Տեղացին աշխատասեր է, բայց հենց լավ արդյունք չի ստանում, հուսահատվում է և թողնում հեռանում»:*

*«Մեր գյուղացիները սրեղծող, աշխատող, արարող մարդիկ են: Հարն էլ այն է, որ սրիպված թողնում զնում են այսպեղից»:*

Քացի դրանից՝ հարցվողների և նաև փորձագետների կողմից նշվեց, որ համայնքի առավել մոբիլ և ակտիվ անդամների էմիգրացիան իր անմիջական բացասական ազդեցությունը ունի նաև համայնքային խնդիրների լուծման և որոշումների ընդունման վրա: Քանի որ ավելի նվազ ակտիվ և նվազ հմուտ բնակչությունն է դառնում մեծամասնություն, համայնքի գործերի կազմակերպման հարցում լրացուցիչ խնդիրներ են ծագում: Մարդկային ռեսուրսների բացասական տեղաշարժը ազդում է տեղական կառավարման, ինչպես նաև տեղական տնտեսության վրա:

Առանցքային տեղեկատուները նշել են նաև, որ տեղական համայնքներում արտագաղթի հիմնական պատճառը ոչ թե աշխատանքի պակասն է, այլ այն հանգամանքը, որ առաջարկվող աշխատանքային պայմաններն այստեղ անշահավետ են:

Հետաքրքիր է նշել միգրացիոն ցանցերի հնարավոր ազդեցության մասին համայնքների աշխատանքային շուկաների վրա, երբ միգրացիոն ցանցը հնարավորություն է տալիս համեմատելու համայնքում և արտերկրում առաջարկվող միևնույն տեսակի աշխատանքի եկամտաբերությունը: Շատ դեպքերում համայնքի անդամները միգրացիոն ցանցերի միջոցով մշտապես տեղեկացվում են Հայաստանից դուրս առաջարկվող հաստիքների մասին, ինչը հաճախ ավելի շահավետ է (անգամ եթե առաջարկվող աշխատանքը առնչություն չունի իրենց մասնագիտության հետ): Ինչպես նշեց հարցվածներից մեկը.

«Միշտ ասում են՝ աշխատարեղ չկա, մարդիկ գնում են աշխատելու: Բայց, օրինակ, գյուղում հովիվ ու նախրապան չունենք ու այդ պատճառով անասուն չենք կարողանում պահել: Գնացել ենք եզդիներին խնդրել, երկու ընտանիք ենք բերել գյուղ, որ մեզ մոտ հովիվ ու նախրապան աշխատեն: Կամ մեկին առաջարկեցինք գյուղի աղբահանությանը զբաղվել, սարսափելի վիրավորվեց, բայց արի՛ ու փե՛ս, որ դրսում այդ նույն աշխատանքը կկատարեն: Անգամ անասնապահությունից են հրաժարվում: Հողերն էլ քիչ են վարում վառելիքի թանկացման պատճառով»:

Ինչպես նշեց մեկ այլ հարցված գյուղապետ.

«Կենսականը այսօր միայն նյութականն է, որն օրեցօր պակասում է: Ով աշխատող չեռք ունի, հեռանում է, գյուղում մնացել են անձարները: Այս հսկայական փոփոխությունը, որ տեսնում եք, դատարկ են: Մրանց փերերը Ռուսաստանում են ապրում: Առիթից առիթ են գալիս: Նյութական միջոցները այսօր միայն Ռուսաստանից են գալիս արտագնա աշխատանքի միջոցով»:

Համայնքներում իրականացված հարցումների արդյունքների համաձայն՝ գոյություն ունի միգրանտների երկու տեսակ. նրանք, ովքեր մեկնել են ընտանիքներով, և նրանք, ովքեր մեկնել են սեզոնային աշխատանքների (այս դեպքում հիմնականում ընտանիքի հայրն է մեկնում, երբեմն՝ որդու հետ միասին): Հարցվածները նշում են, որ առաջին դեպքում, երբ ողջ ընտանիքն է մեկնում, կապը նրանց և համայնքի միջև արագորեն հետընթաց է ապրում ընդհուպ կապի լիարժեք խզում: Երկրորդ դեպքում կապի պահպանման կարևորագույն շարժառիթը այն է, որ մեկնածների ընտանիքների անդամները դեռևս մնում են համայնքում, որոնց նկատմամբ ցուցաբերված օգնությունը կարող է ծառայել որպես բարեկեցիկ ապրելու անհրաժեշտ պայման, իսկ երբեմն էլ մեկնելու և միգրանտին միանալու միջոց:

*«Եթե հարազատներն այսրեղ են, մեկնածները կանոնավոր կերպով օգնում են, բայց կան մարդիկ, ովքեր մեկնում են իրենց ընտանիքներով: Այս մարդիկ մեծամասամբ հակված են ընդհատել կապը իրենց համայնքի հետ, նրանք անգամ տոնակատարություններին չեն այցելում»:*

Հատկանշական է, որ մեկնածների մեջ կան այնպիսի միգրանտներ, ովքեր, արտասահմանյան աշխատաշուկայում հասնելով որոշակի կարգավիճակի և ունենալով որոշակի ազդեցություն համայնքի բնակիչների վրա, նպաստում են սեզոնային միգրացիոն հոսքերում վերջիններիս ներգրավմանը: Տեղական համայնքներում այդպիսի նախաձեռնող անձանց անվանում են «հրավիրողներ» կամ «տանողներ»: Վերջիններս, արտերկրի աշխատաշուկայում տիրապետելով որոշակի ռեսուրսների, նախընտրում են աշխատուժ ներկրել այն համայնքից, որից մեկնել են և որի բնակիչների հետ կապված են ազգակցական կամ այլ տեսակի մերձավորական կապերով (հարևան, ընկեր և այլն ): Այս երևույթը համայնքի բնակիչների ընկալումներում միարժեքորեն համարվում է երկուստեք օգտակար գործընթաց:

*«Մենք գյուղից մարդ ունենք, ով տարեկան տասը հոգու տանում է, իսկ մնացածները տարբեր մարդկանց մոտ են գնում: Հիմնականում սեզոնային աշխատանքի են մեկնում, որ օգնեն հարազատներին»:*

*«Ավելի լավ աշխատանք գտնելու նպատակով մեկնածներից ոչ ոք իրապես չի օգնում իր համայնքին առաջնային խնդիրների լուծման համար: Երբեմն, երբ նրանց ընկերներից մեկը վարատող է լինում կամ դժբախտության մեջ է հայտնվում, քեթևակի օգնություն են ցուցաբերում: Անգամ երբ նրանք կանչում են իրենց ընկերներին կամ հարազատներին աշխատելու համար, հիմնականում լավություն անելու համար չէ, որ կանչում են, այլ դիտում են իրենց համայնքի բնակիչներին որպես էժան աշխատուժ»:*

Հետազոտական տվյալների վերլուծության արդյունքում պարզվել է նաև, որ ներհամայնքային փոփոխություններին համընթաց ձևափոխվել է նաև հայկական ավանդական ընտանիքը: Եթե այն ավանդաբար բնութագրվել է որպես կոմպակտ կերպով բնակվող և անմիջական ու կայուն կապերով ու հարաբերություններով միավորված սոցիալական խումբ, որն ուներ ընդհանուր գույք և տնային տնտեսություն, ապա ժամանակակից մեծածավալ աշխատանքային միգրացիայի հետևանքով հայկական ընտանիքը նույնպես դառնում է վերազգային. ընտանիքի անդամների միջև հաղորդակցումը կրում է միջնորդավորված բնույթ, նրանց փոխհարաբերությունները սեզմենտավորված են և պայմանավորված կոնկրետ տարածության հեռացվածությամբ և ժամանակի փուլայնությամբ՝ միգրացիայի սեզոնայնությանը համապատասխան: Մյուս կողմից՝ վերոնշյալ սահմանափակումները ( *տարածքային, ժամանակային* ) էապես չեն խաթարում հայկական ընտանիքի ավանդական կերպարը, երբ դիտարկում ենք այն դերերի բաշխվածության տեսանկյունից: Մասնավորապես երբ միգրանտը ընտանիքի հայրն է կամ ավագ որդին, նրանց ավանդական առաջնորդող դերն ընտանիքում գլխավորապես մնում է նույնը և վերազգային ցանցի միջոցով իրականացվում է հեռավորությունից: Տեղեկատվական և այլ ժամանակակից հեռահաղորդակցական տեխնոլոգիաների՝ հեռախոսազանգերի, գումարային փոխանցումների, տեղեկատվության փոխանակման և խորհրդատվությունների միջոցով տղամարդ միգրանտներն իրենց մասնակցությունն են ապահովում ընտանիքի և համայնքի որոշումների կայացմանը: Ինչպես նշել է հարցվածներից մեկը.

*«Սովորաբար ամեն հարց մենք հեռախոսով քննարկում ենք նրա հետ, նա ֆիզիկապես չի կարող մասնակցել, բայց փոխարենը մենք ամեն հարց պարզաբանում ենք նրա հետ»:*

Այս տեսակետից, մի կողմից, հարցվածների մի մասը որևէ տարբերություն չի տեսնում միգրանտների ընտանիքների և նույն բնակավայրում ապրող այլ ընտանիքների միջև՝ բացի ֆինանսատնտեսական մակարդակից:



*«Միգրանտների ընտանիքները ավելի լավ են ապրում, քան մյուսները, նրանք լավ հազմված են, ապրում են ավելի բարեկարգ տներում, ունեն կյանքի ավելի բարձր չափորոշիչներ, սակայն պայմանավորված գլուղական կենսակերպով՝ նույն արժեքներն են կիսում: Նման ընտանիքների միակ կորուստը հավանաբար այն է, որ միգրանտների շարք ընտանիքներում կարոտում են իրենց տան անդամին և առանց նրա իրենց ընտանիքը ամբողջական չեն համարում»:*

Մյուս կողմից՝ հարցվածների մի մասը նշում է, որ միգրացիայի ընթացքում փոխվում է ընտանիքներում ավանդական առաջնորդը հանդիսացող հոր կամ ավագ եղբոր դերակատարումը, ինչը փոխում է նաև ավանդական հայ ընտանիքը, ընտանիքի անդամների կենսաձևը և այլն: Արտագնա աշխատանքի մեկնող տղամարդիկ, մշտապես պահպանելով կապն ու ապահովելով տեղեկատվության և ֆինանսական միջոցների փոխանցումն իրենց ընտանիքներին, փորձում են կանխել նման զարգացումները.

*«Շատ ընտանիքներում, որտեղ հայրը ավանդաբար համարվում է ընտանիքի գլուխը և ընտանիքում որոշումների հիմնական կայացնողը, ինչպիսիք են, օրինակ, երեխաների կրթությունը, նրանց ամուսնությունը և այլն, տվյալ խնդիրները կարծես թե մնում են առանց լուծումների, երբ հայրը դառնում է աշխատանքային միգրանտ: Տան գլխավորի բացակայության պայմաններում նման հարցերը չեն կարող լուծվել, եթե հայր միգրանտը չմասնակցի ընտանեկան խնդիրների կարգավորմանը վերազային ցանցերի միջոցով»:*

Այս փաստը լուրջ մտահոգություններ է առաջացնում, քանզի միայն հեռահար կապն է միգրանտին հնարավորություն տալիս ներգրավվելու տեղային խնդիրների լուծման գործում առանց ֆիզիկական մասնակցության, ինչն իր հերթին արտահայտում է աշխատանքային միգրացիայի բացասական ազդեցությունը ավանդական ընտանիքի վրա:

## **Միգրանտների հաղորդակցությունը և կապվածությունը տեղական համայնքների հետ**

Հետազոտության շրջանակներում պարզաբանման ենթակա առանցքային հարցերից մեկն էր, թե ինչպես և ինչու են համայնքի անդամները շարունակում հաղորդակցվել իրենց ազգակիցների, ընկերների և հարևանների հետ, որոնք լքել են համայնքը, բայց Հայաստանից դուրս գտնվելով՝ դեռևս պահպանում են (կամ այլևս չեն պահպանում) կապը միմյանց հետ: Այս հարցադրումը օգնում է ուսումնասիրել վերազգային միգրացիոն ցանցերի ճյուղավորումները, պարզել՝ արդյոք դրանք ընդարձակվում են միգրացիոն գործընթացներին համընթաց, թե կազմալուծվում են միգրանտների մոտ կապ չպահպանելու շարժառիթների և ցանկությունների բացակայության հետևանքով:

Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ առավել մեծ մասնակցություն միգրանտները ունեն ընտանիքի առօրեական կյանքին, հիմնականում դրամական փոխանցումների տեսքով (տե՛ս Աղյուսակ 1): Նույն աղյուսակից երևում է, որ միգրանտները գրեթե չունեն մասնակցություն համայնքի հասարակական-քաղաքական կյանքին:

**Աղյուսակ 3. Միգրանտների մասնակցությունը համայնքի կյանքում (1 - հաճախ, 2 - երբեմն, 3 - երբեք)**

	Նվազագույն արժեք	Առավելագույն արժեք	<b>Միջին արժեք</b>	Միջին քառակուսային շեղում
• Դրամական փոխանցումներ ընտանիքին՝ ուղղված կենցաղային, առօրեական խնդիրներին	1	3	<b>1.60</b>	.707
• Դրամական փոխանցումներ ընտանիքին՝ ուղղված ծախսատար խնդիրներին	1	3	<b>1.67</b>	.708

• Մասնակցություն առօրեական, կենցաղային որոշումների ընդունմանը (Հայաստանում)	1	3	<b>1.97</b>	.879
• Խորհրդատվություն ընտանիքում, շրջապատում ծագած, խնդիրների շուրջ (Հայաստանում)	1	3	<b>1.97</b>	.796
• Մասնակցություն կարևոր, նշանակալի որոշումների ընդունմանը (Հայաստանում)	1	3	<b>1.98</b>	.858
• Այցելություններ հանգստի, հարազատներին տեսակցության նպատակով և այլն...	1	3	<b>2.22</b>	.735
• Միջնորդում՝ ուղիված տարբեր խնդիրների լուծմանը (Հայաստանում)	1	3	<b>2.26</b>	.811
• Դրամական փոխանցումներ բարեկամությանը	1	3	<b>2.38</b>	.710
• Միջնորդություն ծանոթներին արտասահմանում աշխատանքով ապահովելու հարցում	1	3	<b>2.58</b>	.669
• Ծառայություն ՀՀ զինված ուժերում	1	3	<b>2.61</b>	.751
• Մասնակցություն քաղաքական ընտրություններին	1	3	<b>2.70</b>	.542
• Բարեգործություն	1	3	<b>2.72</b>	.568

• Այցելություն բուժման նպատակով	1	3	<b>2.74</b>	.485
• Գործնական, աշխատանքային այցելություններ	1	3	<b>2.77</b>	.464
• Այցելություն ամուսնության նպատակով	1	3	<b>2.82</b>	.452
• Դրամական աջակցություն, ներդրումներ համայնքի, քաղաքի ընդհանուր բարելավման համար	1	3	<b>2.89</b>	.366
• Ներդրումներ՝ խոշոր ձեռնարկատիրության կազմակերպմանը, գործառնմանն ուղղված	1	3	<b>2.93</b>	.303
• Կրթական այցելություն	1	3	<b>2.94</b>	.308
• Մասնակցություն մշակութային միջոցառումներին	1	3	<b>2.95</b>	.248
• Մասնակցություն սպորտային միջոցառումներին	1	3	<b>2.96</b>	.214
• Մասնակցություն բողոքի ակցիաներին, ցույցերին	1	3	<b>2.97</b>	.192

Պետք է փաստել, որ միգրանտները բավականին մեծ ներդրում ունեն հայրենիքում մնացած ընտանիքների տնտեսական կյանքում: Ինչպես երևում է Աղյուսակ 4-ից, միգրանտ ունեցող ընտանիքների մոտ կեսի համար միգրանտը հանդիսանում է ընտանիքի եկամտի հիմնական մասի ձևավորողը, սակայն ընտանիքների մոտ մեկ հինգերորդ մասի համար միգրանտները ընդհանրապես չունեն տնտեսական ներդրումներ:

**Աղյուսակ 4. Միգրանտի ներդրումը ընտանիքի ընդհանուր եկամտի ձևավորման մեջ**

	Տոկոս
1. Ապահովում է ընտանիքի եկամտի հիմնական մասը	48.6
2. Ապահովում է ընտանիքի եկամտի փոքր մասը	31.1
3. Ոչ մի ներդրում չունի	20.3
Ընդամենը	100.0

Հետաքրքրական է, որ միգրանտներն առավել ներգրավված են ընտանիքին վերաբերող կարևոր որոշումների ընդունման գործընթացում: Ինչպես երևում է Աղյուսակ 5-ից, հարցվողների 80%-ից ավելին նշել է, որ նրանց ընտանիքի միգրանտ-անդամները շարունակում են ակտիվորեն մասնակցել ընտանեկան որոշումների կայացման գործին, կայացնում են վերջնական որոշումներ ընտանիքում (26%) կամ էլ մասնակցում են խորհուրդներով (54.5%):

**Աղյուսակ 5. Միգրանտի մասնակցությունը ընտանեկան որոշումների ընդունմանը**

	Տոկոս
1. Ընդհանրապես չի մասնակցում	19.5
2. Մասնակցում է իր խորհուրդներով	54.5
3. Կայացնում է վերջնական որոշում	26.0
Ընդամենը	100.0

Հետաքրքիր է նշել, որ ըստ հարցվածների՝ իրենց բարեկամները և ընկերները պահում են կապերն իրենց հետ ոչ այնքան ֆինանսատնտեսական պատճառներով, այլև հաճախ հուզական բնույթի շարժառիթներով. միգրանտները կարոտում են իրենց երկիրը, բնակավայրը, իրենց տունն ու ընտանիքին:

Նշենք, որ ընդհանուր առմամբ՝ արտագնա աշխատանքներով զբաղված քաղաքացու՝ ընտանիքի անդամների հետ կապը հիմնականում սերտ է, հաճախ է իրականացվում: Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 6-ից, հարցվողների ավելին քան 36%-ը ամեն օր շփվում է իր ազգականների հետ, իսկ ընդհանուր առմամբ՝ հարցվողների 70%-ից ավելին շփվում է առնվազն շաբաթը մեկ անգամ կամ ավելի հաճախ:

**Աղյուսակ 6. Արտագնա աշխատանքային միգրանտների հետ շփման հաճախականությունը**

	Տոկոս
Երբեք	0.3
Ամեն օր	36.6
Շաբաթը մի քանի անգամ	21.5
Շաբաթը մեկ	11.6
Ամիսը մի քանի անգամ	18.3
Ամիսը մեկ	7.7
Հազվադեպ	4.0
<b>Ընդամենը</b>	<b>100</b>

Վիրտուալ հաղորդակցության եղանակները, այդ թվում՝ հեռախոսակապը՝ *Skype*-ը, սոցիալական ցանցերը, ինչպես, օրինակ, *Facebook*-ը կամ հատկապես դրան փոխարինող ռուսական *Odnoklassniki.ru*, *vkontakte.ru* սոցիալական կայքերը, ակտիվորեն օգտագործվում են տեղի հանրությունների կողմից: Անգամ երբ օգտատերերը չունեն տարրական համակարգչային գիտելիքներ, բավականին հաճախ են օգտվում Skype-ից:

Ամփոփելով քանակական տվյալները՝ կարող ենք եզրակացնել, որ շփման առավել արդիական միջոց է մնում հեռախոսակապը, միգրանտների և իրենց ընտանիքների (համայնքների) ներկայացուցիչների միջև շփման նպատակով այն միջինում օգտագործվում է շաբաթը մեկ անգամ: Ինչ վերաբերում է համացանցային միջոցներին, ինչպիսիք են Skype-ը կամ սոցիալական ցանցերը, սպա դրանք օգտագործվում են միջինում տարին մի քանի անգամից մինչև ամիսը մի քանի անգամ:

**Աղյուսակ 7. Հաղորդակցության եղանակները ըստ շփման հաճախականության /0 - երբեք, 1 - հազվադեպ, 2 - տարին մի քանի անգամ, 3 - տարին մեկ, 4 - ամիսը մի քանի անգամ, 5 - ամիսը մեկ, 6 - շաբաթը մի քանի անգամ, 7 - շաբաթը մեկ, 8 - ամեն օր/**

	Նվազագույն արժեք	Առավելագույն արժեք	<b>Միջին արժեք</b>	Միջին քառակուսային շեղում
Հեռախոսակապ	.00 /Երբեք/	8.00 /Ամեն օր/	<b>5.9642</b>	2.29597
Skype	.00 /Երբեք/	8.00 /Ամեն օր/	<b>3.1518</b>	3.32608
Ինտերնետ	.00 /Երբեք/	8.00 /Ամեն օր/	<b>2.3264</b>	3.15618
Անձնական հանդիպումներ	.00 /Երբեք/	4.00 /Ամիսը մեկ/	<b>1.3677</b>	1.11143
Փոստ	.00 /Երբեք/	5.00 /Ամիսը մի քանի անգամ/	<b>0.1804</b>	.69215

Կանոնավոր կապ հիմնականում պահպանվում է ընտանիքի անդամների միջև, որը հաճախ ունի խորհրդանշական բնույթ. մարդիկ զանգահարում են միմյանց օրվա ընթացքում, որպեսզի ստուգեն, թե արդյոք ամեն ինչ «կարգին» է, և չկան արտասովոր խնդիրներ: Ինչպես հարցվածներից մեկը նշեց.

*«Փառք Աստծո, կա հեռախոսը, որով ես կապվում եմ արտասահմանում աշխարհող իմ ամուսնու հետ: Ամուսնուս հետ խոսում եմ գործից ու փողից, հեղու ուզում եմ իմանալ՝ արդյոք նա դեռ պիտու է ինձ»:*

Հետաքրքիր է նշել, որ, ըստ համայնքների ներկայացուցիչների, վստահության մակարդակը համայնքի անդամների միջև մշտապես նվազում է, որն ունի գլխավորապես տնտեսական դրդապատճառներ. եկամուտների բևեռացումը մարդկանց դարձնում է մեկուսացված և կասկածամիտ: Ըստ հարցումների՝ վստահության անկումը համայնքի բնակիչների միջև էապես ազդում է նաև անդրազգային հայկական ցանցի ներքին հարաբերությունների վրա, և նախապես սահմանված ամուր կապերը ժամանակի հետ թուլանում են:

*«Մարդկանց միջև վստահությունը անկում է ապրում, երբ որոշ-  
 աները ունեն ասեն ինչ, իսկ մյուսները չունեն ոչինչ: Նրանք, ովքեր  
 ոչինչ չունեն, ազդեախիվ են դառնում, իսկ նրանք, ովքեր ունեն, կաս-  
 կածամտություն են ձեռք բերում»:*

Նշենք, որ համաձայն ստացված տվյալների՝ համայնքներում հիմնականում վստահություն են վայելում սոցիալական ցանցե-  
 րի այն ներկայացուցիչները, որոնք ներառվածնադամներին ավելի քիչ  
 են վստահում: Հետաքրքրական է, որ նվազագույն վստահությունը  
 վայելում են համայնքի մեծահարուստները, ինչը երևում է Աղյուսակ  
 6-ից: Ի դեպ, ինստիտուցիոնալ կառույցների հանդեպ վստահությու-  
 նը առավել խնդրահարույց է և զիջում է վստահությանն անհատների  
 հանդեպ:

**Աղյուսակ 8. Վստահության մակարդակի միջին արժեքները ստորև  
 ներկայացված խմբերի, կառույցների հանդեպ (1 - լիովին վստահում է,  
 2 - հիմնականում վստահում է, 3 - հիմնականում չի վստահում,  
 4 - բոլորովին չի վստահում)**

	Նվազագույն արժեք	Առավելագույն արժեք	Միջին արժեք	Միջին քառակու- սային շեղում
Ընտանիքի անդամներին, հարազատնե- րին	1	4	1.05	.258
Բարեկամնե- րին	1	4	1.83	.691
Ընկերներին	1	4	1.96	.819
Հայ առաքելա- կան եկեղեցուն	1	4	1.96	1.000
Հարևաններին	1	4	2.47	.939
Համազյուղա- ցիներին	1	4	2.73	.939
Տեղական ինք- նակառավար- ման մարմին- ներին	1	4	2.78	1.076



Հայտնի մտա- վորականնե- րին	1	4	2.79	.915
Համայնքի հե- ղինակություն- ներին	1	4	2.87	.961
Ոստիկանու- թյանը	1	4	2.88	1.085
Մովորական ծանոթներին	1	4	3.06	.840
Մեծահա- րուստներին	1	4	3.48	.783

Սակայն ի տարբերություն հայաստանյան այլ բնակավայրերի՝ դարաբաղյան համայնքներում պատկերը մի փոքր այլ է: Այստեղ, ել-  
նելով հարցումների տվյալներից, վստահության մակարդակը միջանձ-  
նային հարաբերություններում ավելի բարձր է: Այստեղ առանցքային  
նշանակություն ունեն Արցախյան պատերազմն ու դրանում տեղի  
բնակչության անմիջական ներգրավվածությունը: Հարցվածների  
պատասխանների համաձայն՝ պատերազմական փորձը, դրանում  
կոփված միասնականության և համերաշխության ոգին ներկայում ևս  
շարունակում են լինել միջանձնային հարաբերությունների կարգա-  
վորման կարևոր սկզբունքը:

Վստահության բարձր մակարդակը պայմանավորված է նաև տե-  
ղի բնակավայրերի փոքր լինելով և նվազ բնակեցվածությամբ:

*«Մեր ժողովուրդը պատերազմ է տեսել, ինչպե՞ս կարող է հա-  
մախմբված չլինել: Առանց վստահության չենք կարող մի համայն-  
քում ապրել»:*

*«Մեր համաքաղաքացիները համախմբված են, քանի որ բո-  
լորս ճանաչում ենք իրար, վստահության խնդիր չունենք»:*

Այնուամենայնիվ, հարցվածներից շատերը նշել են, որ համայնք-  
ների ներսում դեռ այս կամ այն չափով պահպանվում են ամուր փոխ-

հարաբերություններ՝ պայմանավորված նախապես ձևավորված համագործակցային կապերով: Կան նաև պարբերաբար կազմակերպվող համայնքային տոնակատարություններ, որոնք միավորում են ոչ միայն համայնքի բնակիչներին, այլև նրանց, ովքեր շարունակում են համայնքի հետ կապել իրենց ինքնամույնականացումը և արտերկրից ժամանում են՝ հատուկ տվյալ իրադարձություններին մասնակցելու համար:

Սակայն, ինչպես վկայում են Աղյուսակ 9-ի տվյալները, ընդհանուր ներհամայնքային կապերը զգալիորեն թույլ են՝ համեմատած ընտանեկան, բարեկամական կապերի հետ: Հարցվողների 60%-ի համաձայն՝ արտերկրում ապրող և աշխատող իրենց հարազատը, բարեկամը գրեթե երբեք չի մասնակցում ընդհանուր համայնքի խնդիրների լուծմանը, սակայն հիմնականում նախընտրում է այս կամ այն կերպ մասնակցել նեղ ընտանեկան խնդիրների լուծմանը:

**Աղյուսակ 9. Հարցվողների սոցիալական մասնակցության մակարդակը**

	Բարեկամական, ընկերական ծեսերին, խնջույքներին մասնակցելու տոկոսը	Համայնքի ընդհանուր խնդիրների լուծմանը մասնակցելու տոկոսը
Երբեք	0	40.3
Գրեթե երբեք	11.3	20.6
Հազվադեպ	19.6	10.6
Երբեմն	19.4	13.1
Հաճախ	27.4	9.1
Միշտ	22.3	6.2
Ընդամենը	100.0	100.0

Հարցվածներից առավել լավատեսները նշում են, որ իրենք դեռևս ամուր համայնք են կազմում, որը շարունակում է իր կենսագործունեությունը բնականոն հունով: Համայնքային իրադարձությունները դրդում են բնակիչներին համախմբվել, օգնել միմյանց դժվար պահերին, այնպես որ այս հարցերի շուրջ որևիցե մտահոգություններ չկան: Ինչպես հարցվածներից մեկը նշեց.

*«Միշտ էլ այդպես է լինում: Երբ հարկավոր է, գյուղի բնակիչները համախմբվում են. հարազատները և հարևանները այցելում են հարսանեկան և քաղման արարողություններին: Երեխաների դաստիարակության հարցում ընտանիքը դեռևս իր դիրքերում է, և հենուսարարեսությունը բարեբախտաբար մեծ ազդեցություն չի գործում նրանց վրա»:*

Սակայն, մյուս կողմից, հարցվածների մի մասը նկատում է հակառակ միտումներ, դրանք են միգրացիայի հետևանքով ներհամայնքային կապերի խեղումը, համագործակցության պակասը, համայնքային ինքնության փոխակերպումն ընդհուպ դրա կորուստը: Մասնավորապես մեկնածուներից շատերը դադարում են մասնակցել համայնքի կյանքին, իսկ արտագնա աշխատանքով զբաղվող և արտագաղթող երիտասարդ սերունդը, համայնքի բնակիչների հավաստմամբ, կորցնում է իր ազգային ինքնությունը:

*«Եթե իրենց անձնական հարցը չէ, դժվար է համախմբել: Իսկ, ասենք, քաղումների կամ հարսանիքների ժամանակ բոլորն են խմբվում, քանի որ փոքր գյուղ է, և իրար բոլորը ճանաչում են»:*

*«Ժամանակակից երիտասարդները ուրիշ կերպ են մտածում: Ծույլ են, ոչ մի բանի ձգտում չունեն: Վերջին քսան տարիների դաստիարակությունը վատ անդրադարձավ նրանց վրա: Գերադասում են նպաստ ստանալ ու վատ ապրել, քան թե աշխատել: Համայնքում աղքատության մշակույթ է ձևավորվել»:*

Չանգվածային հարցման արդյունքներում նույնպես երևում են հասարակական հարաբերություններում առկա ինքնուրույնությունն ու համայնքային կապերի պակաս նախընտրելիությունը՝ անհատական մակարդակում որոշումների ընդունման հարցում: Հարցվածների մոտ 82%-ը նախընտրում է լուծել սեփական խնդիրներն առանց դիմելու այլոց օգնության, և միայն 14.1%-ն է հակված դիմելու համայնքաբնակ հարազատներին կամ բարեկամներին: Նրանցից ընդամենը 7%-ն է հակված դիմելու արտերկրում գտնվող հարազատների, բարեկամների օգնությանը:

Հատկանշական է, որ հարցվածների համար առաջնային կարևորության անձանց խմբում ընդգրկված են ընտանիքի անդամները և բարեկամները, իսկ համագյուղացիների կարծիքի կարևորումը ցածր է: Հարցված հայաստանցիների միայն 4.7%-ը կղիմի հարևանների օգնությանը (տե՛ս Աղյուսակ 10):

**Աղյուսակ 10. Հարցվողների համար հետևյալ սոցիալական խմբերի կարծիքի կարևորության միջին արժեքները /1 - շատ կարևոր, 2 - կարևոր, 3 - ոչ կարևոր/**

	Նվազագույն արժեք	Առավելագույն արժեք	Միջին արժեք	Միջին քա- նակուսային շեղում
Ընտանիքի անդամներ, հարա- գատներ	1	3	1.10	.332
Բարեկամներ	1	3	1.78	.589
Ընկերներ	1	3	1.89	.646
Արտասահմա- նաբնակ հարա- գատներ/ բարե- կամներ	1	3	2.11	.741
Հարևաններ	1	3	2.23	.651
Ծանոթներ	1	3	2.30	.589
Համագյուղացի- ներ/ համաքա- դաքացիներ	1	3	2.43	.610
Անծանոթ մար- դիկ	1	3	2.78	.467

Երիտասարդներին առնչվող խնդիրները կապված են միգրացիոն հոսքերում նրանց ակտիվ ներգավթածության փաստի հետ, որը լուրջ մտահոգություններ է առաջացնում տեղի բնակիչների շրջանում, քանզի հարցվածները նշում են, որ երիտասարդության զգալի մասը իրենց ապագան տեսնում է համայնքից և, առհասարակ, Հայաստանից դուրս (հիմնականում Ռուսաստանում): Կենտրոնացած լինելով իրենց սոցիալ-տնտեսական խնդիրների հաղթահարման վրա՝ երիտասարդները քիչ ուշադրություն են դարձնում համայնքային ինքնու-


թյան պահպանման վրա: Բացի դրանից՝ բնակչության երիտասարդ մասի միգրացիան խախտում է կապը սերունդների միջև՝ առաջացնելով անջրպետ, ինչն ուղեկցվում է տեղի համայնքային ինքնության որոշ կարևոր տարրերի կորստով:

*«Երիտասարդները, որոնք դպրոցն ավարտելուց հետո չեն կարողանում աշխատանք գտնել, հոգ չեն տանում իրենց տեղային ինքնության համար: Երիտասարդները այստեղ սրիպված են կա՛մ զբաղվել գյուղատնտեսությամբ, կա՛մ մեկնել Ռուսաստան»:*

*«Չնայած երիտասարդները տեղյակ են տեղի ավանդույթներին և հետևում են դրանց, այնուամենայնիվ միակ բանը, որի մասին մտածում են, դա թողնել գնալն է»:*

Մյուս կողմից՝ չնայած վերոնշյալ կարծիքին և միտմանը՝ հատկապես գյուղաբնակ երիտասարդները հիմնականում բնութագրվում են առաջին հերթին որպես հյուրընկալ և ընտանիքապաշտ, այնուհետ ընկերասեր և աշխատասեր (տե՛ս Գ-ժապատկեր 3):

**Գծապատկեր 3. Հայաստանյան երիտասարդների ընդհանուր բնութագիրը /միջին արժեքներն ըստ 5 միավորանոց սանդղակի/**



Այսպիսով՝ համաձայն հարցվողների՝ համայնքային կապերի և վերազգային ցանցերի վրա դրական ազդեցություն թողնող գործոնների շարքում է ֆինանսական աջակցությունը, որը միգրանտների կողմից կանոնավոր կերպով ուղարկվում է դեպի տեղային համայնքներ հայկական միգրացիոն ցանցի միջոցով, որոնք ձևավորվել են միգրանտների վերջին սերնդի կողմից և զարգացվում են ամեն մի նոր փորձառության հետ: Միգրացիոն ցանցերը ծառայում են որպես ուղիներ, որոնց միջոցով գումար և այլ բարիքներ են տեղափոխվում, ինչպես նաև հանդիսանում են գումարային փոխանցումների առավել հարմար եղանակների գծով տեղեկատվական աղբյուրներ:

Միգրացիայի անշահեկան կողմերի թվում համայնքի բնակիչները նշում են իրենց ընտանիքի անդամի հետ անմիջական կապի սղությունը, որի պայմաններում մեկնածը ընտանիքի հետ գլխավորապես վիրտուալ կապ է պահպանում: Այս առնչությամբ հնչել են նման պատասխաններ.

*«Լավ է, որ երեխաները կուշտ են և դպրոց են հաճախում, սակայն մյուս կողմից մենք տանը տղաները չունենք, հայրը երեխաների հետ չէ: Եթե նա կարողանար այստեղ մնալ, նա օրվա ընթացքում ութ ժամ կաշխատեր, հետո երեկոյան կզար տուն, կզբաղվեր երեխաների հետ ու իր ընտանիքի կողքին կլիներ»:*

*«Միգրացիան գումար է բերում, որը օգտագործում ենք տան հոգսերի ուղղությամբ»:*

*«Գիտեք, անցած տարի իմ ամուսինը չմեկնեց Ռուսաստան աշխատելու, և դա շատ դժվար տարի եղավ մեզ համար: Իհարկե, Ռուսաստանում ևս խնդիրներ կան աշխատանքի հետ կապված, սակայն այս տարի նա կրկին մեկնեց, և չնայած մենք հազիվ ենք կարողանում վերանորոգել մեր տունը, ամեն դեպքում չենք ցանկանում պարտքով գումար վերցնել, քանզի այսպես էլ է լինում նորմալ ապրել»:*

Հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ ակներև փոխկապվածություն գոյություն ունի աշխատանքային միգրանտին ընդունող երկրի և հայաստանյան համայնքներում ապրող միգրանտի ընտանիքի քաղաքական հայացքների միջև. ակնհայտ է դառնում, որ այն համայնքի բնակիչները, որոնց ընտանիքի անդամը(ները) մեկնել է(են) և աշխատում է(են) Հայաստանից դուրս, հակված են այսպես թե այնպես պաշտպանելու միգրանտին ընդունած երկրի շահերը (ներառյալ վերջինիս գերակայությունը, քաղաքական գործունեությունը և գաղափարախոսությունը) և համապատասխանաբար խրախուսում են Հայաստանի քաղաքական կողմնորոշումը (հատկապես համագործակցային բնույթի) այդ երկրի նկատմամբ: Ինչպես հարցվածներից մեկը նշեց.

*«Մեր երկրի և մեր համայնքի ապագան կապված է Ռուսաստանի հետ: Հայերը լավ հարաբերությունների մեջ են ռուսների հետ և նախընտրում են այնպիսի մեկնել գումար աշխատելու համար»:*

*«Իմ ավագ որդին արդասահմանում է աշխատում, նրա հետ այնպիսի այլ մարդիկ էլ են աշխատում, և մեր բարեկեցությունը ուղղակիորեն կապված է այն երկրի բարեկեցության հետ, որտեղ նա աշխատում է: Մենք օրհնում ենք այդ երկիրը, որը օգնում է մեզ լավ ապրել»:*

Հայաստանի այն քաղաքացիները, որոնց հարազատներն ու բարեկամներն ապրում և աշխատում են ՌԴ-ում, ինչպես նաև որոնք ունեն ծրագրեր՝ կապված ՌԴ արտագաղթելու կամ այնտեղ արտագնա աշխատանքով զբաղվելու հետ, կարող են դիտարկվել որպես հանրային պատկերացումներում Ռուսաստանի գլխավորած Եվրասիական տնտեսական միության օգտին Հայաստանի ընտրության կողմնակիցներ:

Հիշեցնենք, որ հարցման առանցքային տեղեկատուներն իրենց հերթին նշում էին, որ Հայաստանից ուղղորդվող աշխատանքային միգրացիան ունի նշանակալի տնտեսական ազդեցություն ոչ թե ընդհանուր համայնքի, այլ առավելապես անհատների կամ փոքր խմբերի



վրա, որոնք իրենց հարազատներից գումարային օգնություն են ստանում միայն իրենց նեղ կարիքների համար: Հետևաբար միգրացիոն ցանցերը չեն կատարում համապարփակ տնտեսական գործառույթ, դրանք ավելի շուտ դաշտ են հանդիսանում, որտեղ միգրանտները և վերջիններիս ցանցերում ուղղակիորեն ընդգրկված մարդիկ իրացնում են իրենց մասնավոր շահերը: Բացի դրանից՝ ստացվում է, որ հայաստանցիների ստվար զանգվածի կողմից Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցության աջակցությունը պայմանավորված է ոչ այնքան ազգային շահերի ապահովմանն ուղղված ջանքերով և նպատակներով, ինչքան անհատական միգրացիոն նախասիրություններով և մասնավոր շահերով:

## Եզրակացություններ

Հայկական վերազգային միգրացիոն ցանցերը կազմավորվել են պատմական հանգամանքներով պայմանավորված սոցիալական, տնտեսական և քաղաքական փոխակերպումների, ինչպես նաև ռազմական կոնֆլիկտների և պատերազմների ազդեցության ներքո, որոնք ամեն անգամ նոր միգրացիոն գործընթացներ են հրահրել: Նախորդ հարյուրամյակում զարգացում ապրած միգրացիոն ցանցերը և Խորհրդային Միության փլուզումը յուրատեսակ ցատկահարթակ հանդիսացան, որը օգտագործվեց հետխորհրդային Հայաստանի միգրանտների նոր սերնդի կողմից՝ որպես ավելի լավ կյանքի, աշխատանքի և հեռանկարների որոնման միջոց:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ աշխատանքային միգրանտների նոր սերունդը գլխավորապես կապ է պահպանում հայաստանյան համայնքի հետ հիմնականում իրենց տեղային ցանցերին ֆինանսական օգնություն ցուցաբերելու միջոցով, ինչը դիտվում է որպես մարդկանց նեղ շրջանակին ուղղված աջակցություն (Հայաստանում մնացած ընտանիքի անդամներ, մոտ ազգականներ և ընկերներ): Համաձայն հավաքված տեղեկատվության՝ միգրանտների կողմից ցուցաբերված ֆինանսական աջակցությունը անմիջականորեն ուղղված է իրենց ընտանիքներին և չի ուղղորդվում դեպի ընդհանուր համայնքի խնդիրները: Մյուս կողմից՝ միգրանտի և համայնքի միջև եղած կապը զգալիորեն թուլանում է, երբ ընտանիքը մեկնում է միգրանտի հետևից:

Աշխատանքային միգրանտները համալրում և օգտագործում են վերազգային սոցիալական ցանցը իրենց տեղային համայնքային ցանցեր գումար կամ այլ բարիքներ ուղարկելու յուրաքանչյուր փորձի հետ զուգընթաց, ինչպես նաև հեռախոսի կամ տեսազանգի (Skype) միջոցով կապի պահպանմամբ, խորհրդատվական աջակցությամբ, համայնքային կամ ընտանեկան իրադարձություններում իրենց մասնակցությամբ:

Ֆինանսական աջակցության հետ մեկտեղ աշխատանքային միգրանտները հաճախ պայմանավորում են իրենց հայաստանյան համայնքի քաղաքական կողմնորոշումները: Նրանք հակված են պաշտ-

պանելու այն երկրի շահերը, որտեղ նրանք մեկնել են ապրելու կամ աշխատելու նպատակով և հետևաբար հակված են փոխանցելու իրենց վերաբերմունքը և ընկալումները իրենց համայնքի անդամներին:

Հայաստանյան ընտրագանգվածի ներկայացուցիչները, իրենց ազգականների և ընկերների շրջանում հաճախ անվերադարձ կամ ժամանակավոր մեկնած միգրանտ ունենալով, հաստատուն կերպով սկսում են կիսել վերջիններիս քաղաքական մոտեցումներն ու մտահոգությունները: Հետևաբար շատ դեպքերում նրանց հաշվով որոշ ակնկալիքներ են լինում տեղային որոշումների կայացման հարցում:

Հայաստանյան հասարակության այն հատվածը, որն իր նախապատվությունն է տվել, հանրային պատկերացումների համաձայն, Ռուսաստանի կողմից գլխավորվող Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի անդամակցմանը, հիմնված է Խորհրդային Միության տարիներին ձևավորված՝ Հայաստանից դեպի հիմնականում Ռուսաստան արտագնա աշխատանքի մեկնման ավանդույթի և ձևավորված միգրացիոն ցանցերի վրա:

Միգրացիոն ցանցերի մեջ ընդգրկված և չընդգրկված ընտանիքները համայնքներում ըստ էության չեն տարբերվում իրենց բարեկամական և ընտանեկան կապերի կարևորման տեսանկյունից: Սակայն էական տարբերություն է գրանցվում նրանց՝ համայնքի կյանքում ներգրավվածության տեսանկյունից՝ միգրանտների ընտանիքները պակաս ներգրավված են ընդհանուր համայնքային կապերում: Հարևանական կապերը նույնպես ավելի ակտիվ են միգրացիոն գործընթացներում չընդգրկվածների մոտ: Բացի դրանից՝ միգրացիոն գործընթացներում չընդգրկվածներն ավելի են կարևորում համայնքն ու եկեղեցին, քան այն ընտանիքների անդամները, որտեղ կա միգրանտ: Համայնքի և եկեղեցու հանդեպ հետաքրքրության և համարժեք կապերի պակասությունը միգրանտների ընտանիքներում փոխարինվում է իրենց՝ արտերկրում ստեղծված կապերը կարևորելով, ինչը հատկանշական է ներհամայնքային ցանցից դեպի վերհամայնքային և ապա վերազգային կապերի և ցանցի ստեղծման համար:

Ինչ վերաբերում է ազգային ինքնության փոխակերպմանը, ապա միգրացիոն գործընթացներում ընդգրկվածների ընտանիքների ան-

դամները ազգային ինքնության բնորոշման հարցում հակված են պակաս կարևորելու Հայաստանում ծնվելու հանգամանքը, Հայ առաքելական եկեղեցու հետևող լինելը և հայկական ազգանուն ունենալը՝ ի տարբերություն միգրացիոն գործընթացներում չներգրավված ընտանիքների անդամների:

Ընտանիքի անդամի ներգրավվածությունը միգրացիոն գործընթացներում որոշակիորեն ազդում է ընտանիքի անդամների՝ գենդերային հավասարության ընկալումների վրա, այն է՝ միգրացիոն գործընթացներում ներգրավվածների ընտանիքներում հակված են ավելի քիչ շեշտադրելու կնոջ և տղամարդու ավանդական դերն ու գործառույթները: Պետք է նշել նաև, որ միգրանտների ընտանիքների անդամներն ավելի լավատես են ապագայի, ինչպես նաև կենցաղային հարցերի վերաբերյալ, քան նրանք, ովքեր ընդգրկված չեն միգրացիոն գործընթացներում:

## Գրականության ցանկ

1. Appadurai A. (1997). *Modernity at Large: Cultural Dimensions in Globalization*, Minnesota, University of Minnesota Press.
2. *Armenians around the World: Migration and Transnationality* (ed. A. Mkrtichyan, 2015). Frankfurt am Main, Peter Lang Edition.
3. *Armenia-Diaspora Relations: 20 Years since Independence* (2010). Policy Forum Armenia, available at <http://www.pf-armenia.org/sites/default/files/documents/files/PFA%20Diaspora%20Report.pdf>.
4. Beauvais, C., J. Jenson (2002). *Social Cohesion: Updating the State of the Research CPRN*, Discussion Paper F22, Canadian Policy Research Networks.
5. Bernard, Paul (1999). *Social Cohesion: A Critique CPRN Discussion Paper F09*, Canadian Policy Research Networks.
6. Brinkerhoff J. M., (2009). *Creating an Enabling Environment for Diasporas' Participation in Homeland Development*. *International Migration*, Vol. 50 (1), pp. 75-95.
7. Careja, R. (2013). *Emigration for Development? An Exploration of the State's Role in the Development Migration Nexus: The Case of Romania*. *International Migration*, Vol. 51 (5), pp. 76-90.
8. Gabaccia D. R. (2006). *Global Geography of 'Little Italy': Italian Neighborhoods in Comparative Perspective*. *Modern Italy*, Vol. 11, N 1, February, pp. 9-24.
9. Golob T. (2010). *The Meaning of «Home» and «Homeland» in Slovene Diasporic Communities*. *Lithuanian Ethnology: Studies in Social Anthropology & Ethnology*, Issue 10, pp. 117-137.
10. Gyulumyan G. (2008). *Enhancing the Role of the Diaspora in Promoting Armenia's Sustainable Development*. Duke Center for International Development, Terry Sanford Institute of Public Policy, Duke University, available at [http://www.aiprg.net/UserFiles/File/annual08/papers/Gohar\\_Gyulumyan.pdf](http://www.aiprg.net/UserFiles/File/annual08/papers/Gohar_Gyulumyan.pdf).
11. Jenson J. (2010). *Defining and Measuring Social Cohesion*, Commonwealth Secretariat and UN Instituted for Social Development.
12. Kaloudis G. (2008). *The Influence of the Greek Diaspora on Greece and the United States*. *International Journal on World Peace*, Vol. XXV, N 3, September, pp. 29-59.
13. Katseli L. T., Lucas R. E. B. and Xenogiani Th. (2006). *Effects of Migration on Sending Countries: What Do We Know?* OECD Development Centre Working

Paper N. 250, June, pp. 1-90.

14. Kivisto P., Faist, Th. (2010). *Beyond a Border: The Causes and Consequences of Contemporary Immigration*. Pine Forge Press.
15. Kotanjian H. (2004). *Armenian Security and U.S. Foreign Policy in the South Caucasus*. *The Quarterly Journal*, Vol. III, N 2, pp. 15-32.
16. Mkrtichyan A. (2004). *Ethnonationalität und ethnokulturelle Konflikte bei der Bildung von Diasporagemeinden*. - In: *Berliner Blätter: Ethnographische und ethnologische Beiträge*, Heft 33, Münster: LIT, pp. 69-85.
17. Munshi K. (2003). *Networks in the Modern Economy: Mexican Migrants in the U. S. Labor Market*. *The Quarterly Journal of Economics*, May, pp. 549-599.
18. *Networks and their Influence on Migration Policy Conclusions from the Romanian-Spanish Migration Space*. *Focus Migration*, Policy brief, 2008, N 11, October, pp. 1-8.
19. *Public Perceptions on Political, Social, and Economic issues in South Caucasus Countries*, April 18, 2014 Yerevan, Armenia, available at [http://www.crrc.am/hosting/file/\\_static\\_content/barometer/2013/CB2013\\_public%20presentation\\_English.pdf](http://www.crrc.am/hosting/file/_static_content/barometer/2013/CB2013_public%20presentation_English.pdf).
20. *Results of the 2011/2012 Migration Survey on the Relationship between Skills, Migration and Development*, European Training Foundation and Caucasus Research Resource Centers (Armenia), European Training Foundation, 2013, available at [http://www.crrc.am/hosting/file/\\_static\\_content/projects/Migration\\_and\\_skills\\_2011/Migration\\_and\\_skills\\_Armenia.pdf](http://www.crrc.am/hosting/file/_static_content/projects/Migration_and_skills_2011/Migration_and_skills_Armenia.pdf).
21. Singh A. (2012). *The Diaspora Networks of Ethnic Lobbying in Canada*. *Canadian Foreign Policy Journal*, Vol. 18, N 3, September, pp. 340-357.
22. Trotz A. D., Mullings B. (2013). *Transnational Migration, the State, and Development: Reflecting on the "Diaspora Option"*. *Small Axe: A Caribbean Journal of Criticism*, N 41, July, pp. 154-171.
23. Varshaver E., Rocheva A., Kochkin E., Kuldina E. (2012). *Kyrgyz Migrants in Moscow: Results of a Quantitative Research on Integration Tracks*. Moscow, available at [http://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract\\_id=2425312](http://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2425312).
24. Waxman D., Lasensky S. (2013). *Jewish Foreign Policy: Israel, World Jewry and the Defense of "Jewish Interests"*. *Journal of Modern Jewish Studies* Vol 12, N 2 July, pp. 232-252.
25. Wong B. (1998). *Ethnicity and Entrepreneurship: The New Chinese Immigrants in the San Francisco Bay Area*. Allyn and Bacon, 120 p.; Guest, K. J. (2011). *From Mott Street to East Broadway: Fuzhounese Immigrants and*

- the Revitalization of New York's Chinatown. *Journal of Chinese Overseas* 7, pp. 24-44.
26. Zarifian J. (2014). The Armenian-American Lobby and Its Impact on U.S. Foreign Policy. *Society, Springer*, N 51, pp. 503-512.
  27. Ziegler Ch. E. (2006). The Russian Diaspora in Central Asia: Russian Compatriots and Moscow's Foreign Policy. *DEMOKRATIZATSIYA*, Vol. 14, No. 1, Winter, Heldref Publications, pp. 103-126.
  28. Zhu Zh. (2007). Two Diasporas: Overseas Chinese and Non-resident Indians in Their Homelands' Political Economy. *Journal of Chinese Political Science*, Vol. 12, N 3, Fall, pp. 281-296.

## **Քովանդակություն**

Հիմնախնդիրը.....	3
Տեսական մոտեցումներ.....	5
Հետազոտության նպատակը, խնդիրները, մեթոդաբանությունը.....	11
Արդյունքների նկարագրություն.....	16
Միգրացիոն գործընթացների ազդեցությունը ներհամայնքային խնդիրների վրա .....	16
Համայնքի բնակիչների ինքնընկալումն ու ներհամայնքային փոփոխությունները միգրացիայի հետևանքով.....	22
Միգրանտների հաղորդակցությունը և կապվածությունը տեղական համայնքների հետ .....	33
Եզրակացություններ.....	49
Գրականության ցանկ .....	52



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Արեմ Մկրտչյան, Գագիկ Թումանյան,  
Արթուր Աթանեսյան, Մարիա Զապավակայա

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ  
ՑԱՆՑԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ  
ԳՈՐԾԱՌՆՄԱՆ ՈՐՈՇ  
ՀԱՐՑԵՐ

Համակարգչային ձևավորող՝ Կ. Չալաբյան  
Կազմի ձևավորող՝ Ա. Պատվականյան  
Հրատ. խմբագիր՝ Հ. Ասլանյան

Տպագրված է «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ում  
ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 6

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 3.5:  
Տպաքանակը՝ 200:

ԵՊՀ հրատարակչություն

---

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1



ՀԱՍՏԱՐԱԿԻՏԻՄՈՒՆ  
ՆՐԵՎԱՆ 2015